10172

Զորին

ЗКСМ1
Շ-78

ՔԱՂԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

10764

Ա. ՇՈԽԻՆ

# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԵՔ

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓՈՐՁԸ

### ԾՐԱԳԻՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

3KCM1
Շ-78

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ 1928

ЗКСМI
Ծ-78
1 DEC 2009
24 SEP 2006

ՔԱՂԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

# ԾՐԱԳՐԵՐ

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓՈՐՁՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ **ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ**

Կոմյերիտմիության 10-ամյա հոբելյանը պատրաստող յեվ կատարող ԼԿՅԵՄ ԿԿ-ի հանձնաժողովի հանձնարարությամբ պատրաստեց տպագրության համար Ա. ՇՈԽԻՆ

Խմբագրությամբ ԼԿՅԵՄ ԿԿ-ի ԱՊՄ-ի յեվ Յերիտպատի

Ընդունված ե ԼԿՅԵՄ ԿԿ ԱՊՄ-ի կողմից բարձր յեվ ցածր տիպի առարկայական խմբակների յեվ ինքնակրթության համար իբրեվ ձեռնարկ

10764
Публичная Библиотека

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ 1928

24 SEP 2006

Հանձնարարված ե ԼԿՅԵՄ ԿԿ-ի ԱՊՄ-ի յեվ Ցերիտպատի
կողմից

Հր. № 899 Գրառեպվար № 1538 (բ) Տիրաժ 3000
Կենտհրատի առաջին տպարան Վաղարշապատում
Պատվեր № 288

15 JUL 2013

## ՀԵՂԻՆԱԿԻՑ

Ներկա աշխատության առթիվ կուզենայինք անել մի շարք նախնական դիտողություններ։ Այդ նախնական դիտողությունները հետևյալներն են՝ 1) նախ՝ պետք ե ձևակերպել յերիտասարդական շարժման պատմությունը, տեսությունն ու փորձն ուսումնասիրող բարձր տիպի խմբակի ծրագրի բովանդակությունը կազմող մի շարք դրություններ. այդ պատճառով էլ կատարելապես հասկանալի յե, վոր այս աշխատանքը հեղինակի կողմից լիապես ավարտված համարվել չի կարող. 2) վոր այժմ ժամանակն ե ընդհանրապես յերիտասարդական շարժման և առանձնապես պրոլետարական կոմունիստական յերիտասարդական շարժման պրոբլեմները խորը տեսական վերլուծության յենթարկել և վոր այդ աշխատանքով պետք ե զբաղվեն ընկերների բազմաթիվ խմբակները, վորոնց կոլլեկտիվ աշխատանքով միմիայն կարելի յե ստեղծել յերիտասարդական շարժման տեսությանն ու փորձին վերաբերյալ խնդիրների դասագիրք և ձեռնարկ. 3) վոր հեղինակին խիստ ցանկալի յե գիտենալ խմբակների ղեկավար և այդ խմբակներին մասնակցող ընկերների կարծիքներն այն բոլոր խնդիրների մասին, վորոնք հանդիպելու յեն նշված ծրագրերն անցնելու պրոցեսում։

Իսկ թե այդպիսի խնդիրներ հանդիպելու յեն, հեղինակը դրանում չի կասկածում։ Յելնելով դրանից, հեղինակը խնդրում ե բոլոր ընկերներին՝ իրենց դիտողությունները, ուղղումները և լրացումները հաղորդել հետևյալ հասցեյով՝ Москва, 66, Спартаковская 2, Индустриально-Педагогический Институт им. К. Либкнехта, Кабинет юношествоведения.

*Մոսկվա 22/VI 1928 թ.*

50638-65

10172
15 JUL 2013

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յերիտասարդական, մանավանդ կոմունիստական յերիտասարդական շարժման տեսության և փորձի վերաբերյալ խնդիրների խորն ուսումնասիրության անհրաժեշտությունը միանգամայն ակներև է։ Այս բանը հաստատվում է ՀամԼԿՅԵՄ-ի պատմության առարկայական խմբակների աշխատանքի այն դրական արդյունքներով, որ ունեցել են կոմյերիտական մի շարք կազմակերպություններ։ Այսպիսով շարքային կոմյերիտականների և ակտիվի՝ յերիտասարդական շարժման տեսության ու փորձի վերաբերյալ գիտելիքները բարձրացնելու խնդիրը պետք է մտցնել կոմյերիտմիության աշխատանքի սիստեմի մեջ։ Պետք է կարծել, որ ԽՍՀՄ-ում կոմյերիտմիության կատարվող տասնամյա հոբելյանի հետ միասին խիստ կերպով աճելու յե միության անդամների հետաքրքրությունը՝ պատմությունն ուսումնասիրելու վերաբերյալ։ Մեզ թվում է, որ ժամանակն է ավելի կամ պակաս չափով ավարտված մի գիրք հրատարակել, որը նպատակ ունենա իրագործելու միության առաջ դրված խնդիրները։

Առարկայական և բարձր տիպի խմբակների սորև բերվող ծրագրերը կարող են հիմք ծառայել թե խմբակների աշխատանքի և թե անհատական մշակման համար։ Ներկա ծրագրերը կարող են նույնպես հիմք ծառայել հեռակա (заочное) կրթության համար, սակայն, այն պայմանով միայն, որ հեռակա կրթությունը կատարվի կազմակերպված ձևով և համապատասխան ղեկավարությամբ։ Սակայն, ծրագրի հետ միասին մենք շոշափված խնդիրների վերաբերյալ կոնսպեկտներ չենք տալիս, թեև դրանք ավելի կպարզեյին խմբակների աշխատանքը. մենք վաղաժամ ենք համարում կոնսպեկտներ հրապարակելը, որովհետև անհրաժեշտ է, որ պրոպագանդիստներն իրենք նախորոք ծրագրերը մշակեն։ Առաջարկվող ծրագրերը լիակատար հնարավո-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. б-ка ՀՍՍՀ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
50638-65

յություն են տալիս, որ ղեկավարն իր վերաբերյալ աշխատանք կատարի։ Անհրաժեշտ ե խիստ զգուշությամբ անցնել խմբակների կազմակերպմանը, որպեսզի շտապելուց չվարկաբեկեն և վիժեցնեն նրանց աշխատանքը։ Դրականության ուղեցույցը մենք կազմել ենք այն հաշվով, որ կարելի լինի նրա վերաբերյալ տեղում ցույց տրված գրականությունից ընտրել այս կամ այն գիրքը։ Յերիտասարդական շարժման վերաբերյալ կա բավականին ընդարձակ գրականություն, միայն հարկավոր ե այդ գրականությունը հավաքել և մի տեղ կենտրոնացնել (հին կոմյերիտական-ակտիվիստի արխիվից հանել) և դրանով յուրաքանչյուր կենտրոնում յերիտասարդական շարժման վերաբերյալ գրադարանի հիմք դնել։ Այդպիսի գրադարանը կարող ե լինել կամ առանձին, կամ կարող ե քաղաքի ընդհանուր գրադարանի մի մասը կազմել։

Յեթե մենք ցանկանում ենք այս տարվա աշնանից առարկայական և բարձր տիպի խմբակների ցանցն ընդարձակել, անհրաժեշտ ե անհապաղ սկսել՝ ղեկավարների կադր ընտրել, նրանց ապագայում աշխատելու հնարավորություն տալ և նշել այդ խմբակների կազմակերպման կետերը։

Այնտեղ, որտեղ կա բարձր տիպի խմբակի թեմաներին վերաբերյալ գրականության ուղեցույց, աստղանիշով (*) նշանակված են այն գրքերը, որ անհրաժեշտ ե կարդալ առաջին հերթին։

Յերկու խոսք էլ յերիտասարդագիտության կաբինետներ կազմակերպելու մասին. մեր կարծիքով այդպիսի կաբինետներ պետք ե կազմակերպել համալսարան ունեցող քաղաքներում, որտեղ կա մանկավարժական ֆակուլտետ կամ մանկավարժական ինստիտուտ։ Առաջին հերթին մանկավարժական բարձրագույն դպրոցների ամենավորակյալ մասին պետք ե քաշել դեպի կաբինետների աշխատանքը և մասնավորապես դեպի ՀամԼԿՅեՄ-ի պատմության խմբակների ղեկավարման գործը։

Յերիտասարդական շարժման կաբինետների աշխատանքի մասին մենք տպում ենք հատկապես մի փոքրիկ հավելված։

ՀամԼԿՅեՄ-ի պատմության առարկայական խմբակների ունկնդիրների համար իբրև առանձին ձեռնարկ «Մոլոդայա Գվարդիա» Հրատարակչությունը պատրաստում ե մի հատուկ զննական ձեռնարկ (գեղարվեստական-նկարազարդ ալբոմ), որը վաճառքի յե դուրս գալու 1928 թ. աշնանը։

---



# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

## ՀԱՄԼԿՅԵՄ-Ի ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԿ

ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ.

Խմբակի նպատակն ե ծանոթացնել իր անդամներին ՀամԼԿՅեՄ-ի պատմությանը—ուսումնասիրել կոմյերիտմիության անցած տասնամյա զարգացման պատմական պրոցեսը և յուրացնել անցյալի փորձն ընթացիկ մոմենտի աշխատանքի համար։ Խմբակի աշխատանքի գլխավոր խնդիրն այն ե, որ նրա մասնակիցները—խմբակի անդամները, հիմնական ձևով ըմռնեն ԽՍՀՄ-ի կոմունիստական պատանեկական շարժման զարգացման պատմական ընթացքը և ծանոթանան ոչ միայն միության պատմության նկարագրությանը, այլև որոշ ընդհանրացումներ կատարեն անցած շրջանների վերաբերյալ։ Այս հանգամանքն առանձնապես խմբակի ղեկավարը պետք ե նկատի ունենա։ Մինչդեռ ՀամԼԿՅեՄ-ի պատմությունն ուսումնասիրող խմբակների աշխատանքի ունեցած փորձն ասում ե հակառակը՝ այն, որ այդպիսի խմբակների աշխատանքի կենտրոնը մինչև այժմ կազմել ե կոմյերիտմիության անցյալ գործունեության **նկարագրությունը**, իսկ անցյալի դասերից ընդհանրացումներ անելու վրա ղեկավարները շատ հաճախ չեն հրավիրել իրենց ունկնդիրների ուշադրությունը։ Ըստ ինքյան հասկանալի յե, որ ընդհանրացումներին ու յեզրակացություններին իբրև հիմք պետք ե ծառայի կոմյերիտմիության գործունեության նկարագրությունը. սակայն այդ նկարագրությունը խնդրի միայն մի կողմն ե, իսկ մյուս կողմը՝ կոմյերիտմիության անցյալ փորձից յեզրակացություններ հանելն ու այդ փորձը հաշվառման յենթարկելն ե։

ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԸ.

Խմբակը կազմակերպվում ե ՀամԼԿՅեՄ-ի բջիջներին կից և այնպիսի ընկերներից, որոնք ավարտել են կոմյերիտմիության I աստիճանի քաղդպրոց։ Խիստ ցանկալի յե, որ այդ ընկերներն ունենան զարգացման

միատեսակ մակարդակ, վորպեսզի ապահովված լինի խմբակի նորմալ աշխատանքը։ Խմբակի մաքսիմում կազմը պետք է բաղկացած լինի 15—20 մարդուց։

**ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԸ**

Խմբակի աշխատանքի մեթոդը խառը մեթոդն է։ Այդ աշխատանքի հիմքը կազմում է Համ ԼԿՅԵՄ-ի*) պատմության դասագրքից տանը կարդացած նյութի վերաբերյալ զրույցը։ Բացի տան ընթերցանությունից, հանձնարարվում է ունկնդիրներին կոնկրետ առաջադրություններ անել պարզելու մի շարք խնդիրներ, ինչպես, օրինակ, բանվոր յերիտասարդության աշխատանքի դրությունը տվյալ գործարանում կապիտալիզմի ժամանակ, հասակավոր բանվորների և հին բոլշևիկների հետ միասին պարզել յերիտասարդության՝ ընդհանրապես խմբակներին մասնակցելու խնդիրը և այլն և այլն։ Խիստ ցանկալի յե նույնպես, վոր ունկնդիրների մոտ թվական նյութը լուսաբանված լինի (դիագրամների ձևով), իսկ յուրաքանչյուր զրույցի վերաբերյալ հիմնական յեզրակացությունները արձանագրվեն առանձին տետրակում։ Հանձնարարում ենք նույնպես հենց պարապմունքի ժամանակ կարդալ ԼԿՅԵՄ-ի պատմության վերաբերյալ ամենահետաքրքիր հատվածները՝ թե դասագրքից և թե ունեցած խրեստոմատիաներից ու ժողովածուներից։ Խմբակում ավելի կենդանություն մտցնելու համար անհրաժեշտ է կոմյերիտմիության անցյալ աշխատանքի բոլոր խնդիրները կապել կոմյերիտմիության շարժման ժամանակակից պրոբլեմների հետ։ Սակայն, մենք խստորեն հակառակ ենք, վոր ՀամԼԿՅԵՄ-ի պատմության ուսումնասիրությունը, վերոհիշյալ տեսակետից, փոխարինվի միմիայն կոմյերիտմիության ժամանակակից աշխատանքին վերաբերող զրույցներով։

**ԽՄԲԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ.**

ՀամԼՀՅԵՄ-ի պատմության առարկայական խմբակի ղեկավարը պետք է օժտված լինի իր աշխատանքի համար անհրաժեշտ մի շարք հատկություններով և նա **միմիայն** ՀամԼԿՅԵՄ-ի պատմության խնդիրների լուրջ ուսումնասիրությամբ կկարողանա իր դասավանդելիք առարկայով շահագրգռել ունկնդիրներին։ Մեր կարծիքով կազմակերպվող խմբակի ղեկավարը պետք է օժտված լինի

*) Ի նկատի ունենք Ա. Շոխինի «Краткий очерк истории Комсомола» Изд. «Молод. Гвардия» 1926 թ.: ՀամԼԿՅԵՄ-ի 10-ամյա հոբելյանի առթիվ գիրքը վերահրատարակվում է ուղղված և նոր հավելումներով։

Խմբ. ծանոթ.։



հետևյալ հատկություններով։ Նախ՝ նա պետք է բավականաչափ գիտություն ունենա թե ընդհանուր տեսական և թե կոմյերիտմիության գործնական աշխատանքին վերաբերող խնդիրների մասին։ Անհրաժեշտ է, վոր խմբակների ղեկավարներն աշխատանքի նշանակվեն պարապմունքներից մեկ կամ յերկու ամիս առաջ, վորպեսզի նրանք կարողանան նախապես պատրաստվել այն մի շարք խնդիրներից, վորոնց շուրջը կոմյերիտականների հետ աշխատելու յեն։ Յերկրորդ՝ ղեկավարը պետք է օժտված լինի նաև խմբակում աշխատանք կատարելու մեթոդական պատրաստությամբ. այդ նշանակում է, վոր նա չպետք է դասավանդման աշխատանքում լինի սկսնակ։ Յերրորդ՝ ղեկավարը պետք է հետաքրքրությամբ աշխատի տվյալ առարկայից, այսինքն այդպիսի խմբակների համար ղեկավարներ ընտրելիս պետք է առաջնորդվել կամավոր սկզբունքով, շահագրգռելով, սակայն, կոմյերիտմիության պրոպագանդիստների կադրին այդ առարկայական խմբակում յեղած աշխատանքով։ Չորրորդ՝ ղեկավարը պետք է լավ ծանոթ լինի տեղի կոմյերիտմիության կազմակերպության կյանքին, աշխատանքին և նրա անցյալին, և հետևի նրա գործունեությանը։ Ղեկավարն ընդհանուր առմամբ ծանոթ չլինելով տվյալ գործարանի կամ ձեռնարկության կոմյերիտմիության կազմակերպության կյանքին և աշխատանքի հիմնական խնդիրներին, լավ ղեկավար լինել չի կարող։ Հինգերորդ՝ ղեկավարը պետք է հետաքրքրվի ձեռնարկության արտադրական կյանքով, բանվոր յերիտասարդության՝ արտադրական պրոցեսում ունեցած դերով և այլն։ Ըստինքյան հասկանալի յե, վոր ղեկավարը պետք է կուսակցական տեսակետից լինի դաստիարակված և տոկուն։ Մենք ամեն կերպ ցանկանում ենք ընդգծել ղեկավարների կադրի պատրաստության անհրաժեշտությունը՝ ուսումնական տարին սկսվելուց առաջ, իսկ աշխատանքի պրոցեսում նրանց աշխատանքին իբրև օգնող՝ մշտական պրոպագանդիստական կոլլեկտիվ ստեղծելու անհրաժեշտությունը։

Ղեկավարը պարապմունքներն սկսվելուց առաջ պետք է հիմնովին մշակման յենթարկի ՀամԼԿՅԵՄ-ի պատմությանը վերաբերող գրականությունը (տես՝ բարձր տիպի խմբակ, թեմա III, VI և V—հանձնարարելի գրականության ցուցակը)։ Դրա համար էլ մենք ղեկավարներին յուրաքանչյուր զրույցի համար լրացուցիչ գրականություն ցույց չենք տալիս։

միատեսակ մակարդակ, վորպեսզի ապահովված լինի խմբակի նորմալ աշխատանքը։ Խմբակի մաքսիմում կազմը պետք ե բաղկացած լինի 15—20 մարդուց։

**ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԸ**

Խմբակի աշխատանքի մեթոդը խառը մեթոդն ե։ Այդ աշխատանքի հիմքը կազմում ե Համ ԼԿՅԵՄ-ի*) պատմության դասագրքից տանը կարդացած նյութի վերաբերյալ զրույցը։ Բացի տան ընթերցանությունից, հանձնարարվում ե ունկնդիրներին կոնկրետ առաջադրություններ անել պարզելու մի շարք խնդիրներ, ինչպես, որինակ, բանվոր յերիտասարդության աշխատանքի դրությունը տվյալ գործարանում կապիտալիզմի ժամանակ, հասակավոր բանվորների և հին բոլշևիկների հետ միասին պարզել յերիտասարդության՝ ընդհանրապես խմբակներին մասնակցելու խնդիրը և այլն և այլն։ Խիստ ցանկալի յե նույնպես, վոր ունկնդիրների մոտ թվական նյութը լուսաբանված լինի (դիագրամների ձևով), իսկ յուրաքանչյուր զրույցի վերաբերյալ հիմնական յեզրակացությունները արձանագրվեն առանձին տետրակում։ Հանձնարարում ենք նույնպես հենց պարապմունքի ժամանակ կարդալ ԼԿՅԵՄ-ի պատմության վերաբերյալ ամենահետաքրքիր հատվածները՝ թե դասագրքից և թե ունեցած խրեստոմատիաներից ու ժողովածուներից։ Խմբակում ավելի կենդանություն մտցնելու համար անհրաժեշտ ե կոմյերիտմիության անցյալ աշխատանքի բոլոր խնդիրները կապել կոմյերիտմիության շարժման ժամանակակից պրոբլեմների հետ։ Սակայն, մենք խստորեն հակառակ ենք, վոր ՀամԼԿՅԵՄ-ի պատմության ուսումնասիրությունը, վերոհիշյալ տեսակետից, փոխարինվի միմիայն կոմյերիտմիության ժամանակակից աշխատանքին վերաբերող զրույցներով։

**ԽՄԲԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ.**

ՀամԼՀՅԵՄ-ի պատմության առարկայական խմբակի ղեկավարը պետք ե ոժտված լինի իր աշխատանքի համար անհրաժեշտ մի շարք հատկություններով և նա **միմիայն** ՀամԼԿՅԵՄ-ի պատմության խնդիրների լուրջ ուսումնասիրությամբ կկարողանա իր դասավանդելիք առարկայով շահագրգռել ունկնդիրներին։ Մեր կարծիքով կազմակերպվող խմբակի ղեկավարը պետք ե ոժտված լինի

*) Ի նկատի ունենք Ա. Շոխինի «Краткий очерк истории Комсомола» Изд. «Молод. Гвардия» 1926 թ.: ՀամԼԿՅԵՄ-ի 10-ամյա հոբելյանի առթիվ գիրքը վերահրատարակվում ե ուղղված և նոր հավելումներով։

Խմբ. ծանոթ.։



հետևյալ հատկություններով։ Նախ՝ նա պետք ե բավականաչափ գիտություն ունենա թե ընդհանուր տեսական և թե կոմյերիտմիության գործնական աշխատանքին վերաբերող խնդիրների մասին։ Անհրաժեշտ ե, վոր խմբակների ղեկավարներն աշխատանքի նշանակվեն պարապմունքներից մեկ կամ յերկու ամիս առաջ, վորպեսզի նրանք կարողանան նախապես պատրաստվել այն մի շարք խնդիրներից, վորոնց շուրջը կոմյերիտականների հետ աշխատելու յեն։ Յերկրորդ՝ ղեկավարը պետք ե ոժտված լինի նաև խմբակում աշխատանք կատարելու մեթոդական պատրաստությամբ. այդ նշանակում ե, վոր նա չպետք ե դասավանդման աշխատանքում լինի սկսնակ։ Յերրորդ՝ ղեկավարը պետք ե հետաքրքրությամբ աշխատի տվյալ առարկայից, այսինքն այդպիսի խմբակների համար ղեկավարներ ընտրելիս պետք ե առաջնորդվել կամավոր սկզբունքով, շահագրգռելով, սակայն, կոմյերիտմիության պրոպագանդիստների կադրին այդ առարկայական խմբակում յեղած աշխատանքով։ Չորրորդ՝ ղեկավարը պետք ե լավ ծանոթ լինի տեղի կոմյերիտմիության կազմակերպության կյանքին, աշխատանքին և նրա անցյալին, և հետևի նրա գործունեյությանը։ Ղեկավարն ընդհանուր առմամբ ծանոթ չլինելով տվյալ գործարանի կամ ձեռնարկության կոմյերիտմիության կազմակերպության կյանքին և աշխատանքի հիմնական խնդիրներին, լավ ղեկավար լինել չի կարող։ Հինգերորդ՝ ղեկավարը պետք ե հետաքրքրվի ձեռնարկության արտադրական կյանքով, բանվոր յերիտասարդության՝ արտադրական պրոցեսում ունեցած դերով և այլն։ Ըստինքյան հասկանալի յե, վոր ղեկավարը պետք ե կուսակցական տեսակետից լինի դաստիարակված և տոկուն։ Մենք ամեն կերպ ցանկանում ենք ընդգծել ղեկավարների կադրի պատրաստության անհրաժեշտությունը՝ ուսումնական տարին սկսվելուց առաջ, իսկ աշխատանքի պրոցեսում նրանց աշխատանքին իբրև ոգնող՝ մշտական պրոպագանդիստական կոլլեկտիվ ստեղծելու անհրաժեշտությունը։

Ղեկավարը պարապմունքներն սկսվելուց առաջ պետք ե հիմնովին մշակման յենթարկի ՀամԼԿՅԵՄ-ի պատմությանը վերաբերող գրականությունը (տես՝ բարձր տիպի խմբակ, թեմա III, VI և V—հանձնարարելի գրականության ցուցակը)։ Դրա համար ել մենք ղեկավարներին յուրաքանչյուր զրույցի համար լրացուցիչ գրականություն ցույց չենք տալիս։

միատեսակ մակարդակ, վորպեսզի ապահովված լինի խմբակի նորմալ աշխատանքը: Խմբակի մաքսիմում կազմը պետք է բաղկացած լինի 15—20 մարդուց:

**ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԸ**

Խմբակի աշխատանքի մեթոդը խառը մեթոդն է: Այդ աշխատանքի հիմքը կազմում է ՀամԼԿՅԵՄ-ի*) պատմության դասագրքից տանը կարդացած նյութի վերաբերյալ զրույցը: Բացի տան ընթերցանությունից, հանձնարարվում է ունկնդիրներին կոնկրետ առաջադրություններ անել պարզելու մի շարք խնդիրներ, ինչպես, որինակ, բանվոր յերիտասարդության աշխատանքի դրությունը տվյալ գործարանում կապիտալիզմի ժամանակ, հասակավոր բանվորների և հին բալշևիկների հետ միասին պարզել յերիտասարդության՝ ընդհանրապես խմբակներին մասնակցելու խնդիրը և այլն և այլն: Խիստ ցանկալի յե նույնպես, վոր ունկնդիրների մոտ թվական նյութը լուսաբանված լինի (դիագրամների ձևով), իսկ յուրաքանչյուր զրույցի վերաբերյալ հիմնական յեզրակացությունները արձանագրվեն առանձին տետրակում: Հանձնարարում ենք նույնպես հենց պարապմունքի ժամանակ կարդալ ԼԿՅԵՄ-ի պատմության վերաբերյալ ամենահետաքրքիր հատվածները՝ թե դասագրքից և թե ունեցած խրեստոմատիաներից ու ժողովածուներից: Խմբակում ավելի կենդանություն մտցնելու համար անհրաժեշտ է կոմյերիտմիության անցյալ աշխատանքի բոլոր խնդիրները կապել կոմյերիտմիության շարժման ժամանակակից պրոբլեմների հետ: Սակայն, մենք խստորեն հակառակ ենք, վոր ՀամԼԿՅԵՄ-ի պատմության ուսումնասիրությունը, վերոհիշյալ տեսակետից, փոխարինվի միմիայն կոմյերիտմիության ժամանակակից աշխատանքին վերաբերող զրույցներով:

**ԽՄԲԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ.**

ՀամԼՀՅԵՄ-ի պատմության առարկայական խմբակի ղեկավարը պետք է ոժտված լինի իր աշխատանքի համար անհրաժեշտ մի շարք հատկություններով և նա **միմիայն** ՀամԼԿՅԵՄ-ի պատմության խնդիրների լուրջ ուսումնասիրությամբ կկարողանա իր դասավանդելիք առարկայով շահագրգռել ունկնդիրներին: Մեր կարծիքով կազմակերպվող խմբակի ղեկավարը պետք է ոժտված լինի

*) Ի նկատի ունենք Ա. Շոխինի «Краткий очерк истории Комсомола» Изд. «Молод. Гвардия» 1926 թ.: ՀամԼԿՅԵՄ-ի 10-ամյա հոբելյանի առթիվ գիրքը վերահրատարակվում է ուղղված և նոր հավելումներով:

Խմբ. ծանոթ.:



հետևյալ հատկություններով: Նախ՝ նա պետք է բավականաչափ գիտություն ունենա թե ընդհանուր տեսական և թե կոմյերիտմիության գործնական աշխատանքին վերաբերող խնդիրների մասին: Անհրաժեշտ է, վոր խմբակների ղեկավարներն աշխատանքի նշանակվեն պարապմունքներից մեկ կամ յերկու ամիս առաջ, վորպեսզի նրանք կարողանան նախապես պատրաստվել այն մի շարք խնդիրներից, վորոնց շուրջը կոմյերիտականների հետ աշխատելու յեն: Յերկրորդ՝ ղեկավարը պետք է ոժտված լինի նաև խմբակում աշխատանք կատարելու մեթոդական պատրաստությամբ. այդ նշանակում է, վոր նա չպետք է դասավանդման աշխատանքում լինի սկսնակ: Յերրորդ՝ ղեկավարը պետք է հետաքրքրությամբ աշխատի տվյալ առարկայից, այսինքն այդպիսի խմբակների համար ղեկավարներ ընտրելիս պետք է առաջնորդվել կամավոր սկզբունքով, շահագրգռելով, սակայն, կոմյերիտմիության պրոպագանդիստների կադրին այդ առարկայական խմբակում յեղած աշխատանքով: Չորրորդ՝ ղեկավարը պետք է լավ ծանոթ լինի տեղի կոմյերիտմիության կազմակերպության կյանքին, աշխատանքին և նրա անցյալին, և հետևի նրա գործունեյությանը: Ղեկավարն ընդհանուր առմամբ ծանոթ չլինելով տվյալ գործարանի կամ ձեռնարկության կոմյերիտմիության կազմակերպության կյանքին և աշխատանքի հիմնական խնդիրներին, լավ ղեկավար լինել չի կարող: Հինգերորդ՝ ղեկավարը պետք է հետաքրքրվի ձեռնարկության արտադրական կյանքով, բանվոր յերիտասարդության՝ արտադրական պրոցեսում ունեցած դերով և այլն: Ըստինքյան հասկանալի յե, վոր ղեկավարը պետք է կուսակցական տեսակետից լինի դաստիարակված և տոկուն: Մենք ամեն կերպ ցանկանում ենք ընդգծել ղեկավարների կադրի պատրաստության անհրաժեշտությունը՝ ուսումնական տարին սկսվելուց առաջ, իսկ աշխատանքի պրոցեսում նրանց աշխատանքին իբրև ոգնող՝ մշտական պրոպագանդիստական կոլլեկտիվ ստեղծելու անհրաժեշտությունը:

Ղեկավարը պարապմունքներն սկսվելուց առաջ պետք է հիմնովին մշակման յենթարկի ՀամԼԿՅԵՄ-ի պատմությանը վերաբերող գրականությունը (տես՝ բարձր տիպի խմբակ, թեմա III, VI և V—հանձնարարելի գրականության ցուցակը): Դրա համար էլ մենք ղեկավարներին յուրաքանչյուր զրույցի համար լրացուցիչ գրականություն ցույց չենք տալիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

*Պարապմունքներին ունկնդիրների համար հիմնական գրականություն լինելու յե.— ՀամԼԿՅեՄ-ի պատմության դասագիրքը, վորը պատրաստվելու յե սույն ծրագրի համեմատ (ստորև բերված), ապա նաև ՀամԼԿՅեՄ-ի պատմության ալբոմները, վորոնք լույս են տեսնելու կոմյերիտմիության 10-ամյա հոբելյանին։ Հաջորդ գրականությունը կարող ե հանձնարարել ղեկավարը՝ նայած թե ինչ պատրաստություն ունի խմբակը։*

---

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

### ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

### *Ի՞ՆՉ Ե ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ*

*Առաջին պարապմունքը լինելու յե ներածական զրույց։ Զրույցի համար իբրև հիմք են ծառայելու հետևյալ յերեք հիմնական հարցերը՝*

*1. Ինչո՞ւ համար պետք ե իմանալ կոմյերիտմիության կազմակերպության անցյալը.*

*2. Ի՞նչ ե յերիտասարդական շարժումը և նրա տեղը հասարակական կազմակերպությունների սիստեմում.*

*3. Ի՞նչպիսի կազմակերպություն ե կոմյերիտմիությունը ԽՍՀՄ-ում։*

#### ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Ինչո՞ւ պետք ե գիտենալ կոմյերիտմիության կազմակերպության անցյալը.**— *Այստեղ անհրաժեշտ ե ունկնդիրներին առաջադրել այն խնդիրը, թե ինչ ե պատմությունն ընդհանրապես, ինչ ե հեղափոխական շարժման պատմությունը մասնավորապես և այսպիսի յեզրակացություն հանել՝ թե վորքան հրաժեշտ են պատմական գիտելիքներն ամեն մի հասարակական կազմակերպության ընթացիկ ամենորյա աշխատանքի համար։ Ընդգծել հատկապես այն միտքը, վոր բանվոր և գյուղացի յերիտասարդությունը, վորն աճում ե կապիտալիստական հարաբերությունների տիրապետության բացակայության պայմաններում, պետք ե հատուկ ուշադրությամբ ուսումնասիրի անցյալը, քանի վոր այդ անցյալի ուսումնասիրությունը կարող ե նրան տալ մարքսիստական աշխարհահայացք։ Ցանկալի յե ունկնդիրներին ծանոթացնել պատմական յերևույթների գիտական վերլուծության ձևերին ու մեթոդներին։*



**2. Ի՞նչ ե յերիտասարդական շարժումը յեվ նրա գրաված տեղը հասարակական հարաբերությունների սիստեմում.**— *Այստեղ անհրաժեշտ ե խմբակի անդամներին ընդհանուր գծերով ծանոթացնել յերիտասարդական շարժման եյության, նրա ծագման պատճառների և դասակարգային բնույթի հետ։ Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել պարզաբանելու—«յերիտասարդական կազմակերպությունն իբրև շարժափոկ և իբրև այս կամ այն հասարակական դասակարգի պահեստ» տերմինի եյությունը (Թեմայի այդ մասի մանրամասն մեկնաբանությունը՝ ղեկավարի համար՝ տես բարձր տիպի խմբակի առաջին թեման)։*

**3. Ի՞նչպիսի կազմակերպություն ե ՀամԼԿՅեՄ-ը ԽՍՀՄ-ում.**— *Այստեղ, իբրև նախորդի յեզրակացություն, անհրաժեշտ ե պարզաբանել կոմունիստական յերիտասարդական շարժման դերի նպատակն անցողիկ հասարակության մեջ, նրա գրաված տեղը խորհրդային պետության կազմակերպությունների սիստեմում և նրա փոխհարաբերությունները կուսակցության, արհմիությունների, պրոլետարական պետության և այլ հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ։*

#### ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Պրոլետարական յերիտասարդական շարժման ծագման պատճառները:**

**2. Կարո՞ղ են լինել արդյոք յերիտասարդության «անկուսակցական» կազմակերպություններ:**

**3. Ի՞նչ ե կոմյերիտական կազմակերպությունը յեվ նրա տեղը պրոլետարիատի կազմակերպությունների սիստեմում:**

**4. Ի՞նչպիսի փոխհարաբերությունների մեջ ե կոմյերիտմիությունը՝**

**ա) ՀամԿ(բ)Կ-ի հետ,**
**բ) Արհմիությունների հետ,**
**գ) Խորհրդային իշխանության մարմինների հետ,**
**դ) Յերիտասարդության մասսաների հետ:**

### ԶՐՈՒՅՑ ՅԵՐԿՐՈՐԴ

### *ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ*

*Այս թեմայում արդեն անհրաժեշտ ե անցնել Կոմյերիտմիության նախապատմությանը։ Զրույցի համար իբրև հիմնական*

խնդիրներ են լինելու՝ 1) բանվոր և գյուղացի յերիտասարդության կյանքը ցարական Ռուսաստանում. 2) հեղափոխական պայքարը Ռուսաստանում և յերիտասարդության նրա մեջ ունեցած մասնակցությունը. 3) բանվոր և գյուղացի յերիտասարդության մասսայական կազմակերպությունների առաջացումը Փետրվարյան հեղափոխությունից հետո. 4) բանվոր և գյուղացի յերիտասարդության շարժման բոլշևիկանացման պրոցեսը Փետրվարից մինչև Հոկտեմբեր։

## ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության կյանքը ցարական Ռուսաստանում.**—*Ամենից առաջ անհրաժեշտ է նշել նախահեղափոխական Ռուսաստանի դասակարգային կառուցվածքը, ճորտատիրության մնացորդները և դրա հետ՝ կապիտալիստական հարաբերությունների աճումը։ Իբրև կոնկրետ խնդիրներ, որ անհրաժեշտ է պարզաբանել, հանդիսանում են հետևյալ խնդիրները.—1) 1900—1916 թ. թ. արդյունաբերության մեջ աշխատող բանվոր յերիտասարդության թիվը. 2) յերեխաների և անչափահասների աշխատավարձը. 3) բանվորական որ, գիշերային աշխատանք, արտաժամյա աշխատանքներ. 4) աշխատանքի պայմանները. 5) կենցաղ (բնակարան, սնունդ, վոստիկանական հսկողություն, հարբեցողություն, ժամանցումներ, մորալ, աղջկա վիճակը և այլն). 6) գործազրկությունն ու յերիտասարդությունը. 7) յերիտասարդության վիճակը մանր արդյունաբերության, գյուղական տնտեսության և առևտրի մեջ. 8) յերիտասարդությունն ու վորակավորումը. 9) բանվոր և գյուղացի-յերիտասարդության ընդհանուր կրթությունը. 10) գործարանային օրենսդրությունը և նրա կիրառման փորձը. 11) յեկեղեցին և նրա ունեցած ազդեցությունը յերիտասարդության վրա։*

**2. Հեղափոխական պայքարը Ռուսաստանում յեվ յերիտասարդության նրա մեջ ունեցած մասնակցությունը.**—*Պարզելով բանվոր և գյուղացի յերիտասարդության կյանքի և կենցաղի պատկերը, անհրաժեշտ է անցնել նրա՝ բանվոր դասակարգի ընդհանուր հեղափոխական պայքարում ունեցած դերի պարզաբանմանը։ Պետք է ցույց տալ բանվոր յերիտասարդության ավելի հեղափոխական լինելու պատճառները համեմատած մեծահասակների հետ և ցույց տալ՝ թե ինչպես է բանվոր յերիտասարդությունը հանդիսացել այն յերեք պահեստներից մեկը, վորտեղից*



*բոլշևիկյան կուսակցությունը վերցրել է իր ուժերը։ Պետք է մատնանշել գյուղացի յերիտասարդության ունեցած մասնակցությունը գյուղացիական խռովություններում և անկարգություններում (մանավանդ 1902 և 1905 թ. թ.)։ Բացի ընդհանուր հեղափոխական պայքարում յերիտասարդության ունեցած պայքարից, մատնանշել այդ յերիտասարդության ինքնուրույն յելույթների այն ձևերը, վորոնք անցյալում յեղել են (քաղաքական և տնտեսական գործադուլներ, յերիտասարդության կազմակերպ.)։ Իբրև յեզրակացություն պետք է քննության առնել այն հարցը, թե՝ ինչու նախահեղափոխական Ռուսաստանում, հակառակ Արևմուտքի, չառաջացավ մասսայական ինքնուրույն յերիտասարդական շարժում (ցարիզմի ճնշում, մեծահասակների և յերիտասարդների միջև սոցիալական ընդհարման բացակայություն, ուժերի և գործողության միասնականության անհրաժեշտություն բանվոր դասակարգի ընդհանուր հեղափոխական պայքարում և այլն)։*

**3. Բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության մասսայական կազմակերպությունների ծագումը Փետրվարյան հեղափոխությունից առաջ.**—*Այստեղ անհրաժեշտ է մանրամասն կերպով ծանոթացնել ունկնդիրներին Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո ծագած առաջին կազմակերպություններին, ցույց տալ այդ շրջանում յերիտասարդական կազմակերպությունների առաջ գալու սոցիալ-տնտեսական պատճառները (քննության առնել Պետերբուրգի* «Труд и Свет», *յերիտասարդության սոցիալիստական միությունների,* III *Ինտերնացիոնալի անվան բանվոր յերիտասարդության միությունների, գյուղի յերիտասարդության կուլտուր-լուսավորական խմբակների աշխատանքը)։ Այդ կազմակերպությունների պատմությունը կապել բանվոր դասակարգի և գյուղացիության Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների մեջև յեղած ընդհանուր դրության հետ և անցնել յեզրակացության։*

**4. Բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության շարժման բոլշևիկանացման պրոցեսը Փետրվարից մինչև Հոկտեմբեր.**—*Այս պրոբլեմը հանդիսանում է զրույցի իբրև յեզրափակիչ մասը և այդ պրոբլեմը դրվում է ուսումնասիրելու համար այդ շրջանում բանվոր յերիտասարդության քաղաքական տրամադրություններն ու յերիտասարդության մեջ կատարվող աշխատանքում կուսակցության ունեցած դերը (*II *համագումար,* VI *համագումար, Լենինը յերիտասարդության մասին 1905—1917 թ. թ. շըր-*

ջանում), և պետք է մանրամասնորեն քննության առնվեն բանվոր յերիտասարդության պատրաստությունն ու Հոկտեմբերյան ապստամբության մեջ ունեցած ակտիվ մասնակցությունը:

### ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1 Ի՞նչով է բնորոշվում բանվոր, գյուղացի յեվ սովորող յերիտասարդության դրությունը ցարական Ռուսաստանում:**

**2. Ի՞նչն է հանդիսանում բնորոշ ցարական Ռուսաստանում առաջացած հեղափոխական յերիտասարդության խմբակների աշխատանքում:**

**3. Ինչո՞ւ ցարական Ռուսաստանում չի յեղել մասսայական պրոլետարական յերիտասարդական շարժում:**

**4. Ինչո՞ւ բանվոր յեվ գյուղացի յերիտասարդությունն ստեղծելով իր կազմակերպությունները, իբրեվ կանոն, միանգամից հարում եր բոլշեվիկյան կուսակցությանը:**

**5. Ի՞նչ պայմաններից են կախված կոմյերիտական կազմակերպությունների բովանդակությունը, ձեվերը յեվ մեթոդները:**

**6. Ինչո՞ւ բանվոր յեվ գյուղացի յերիտասարդությունը հանդիսանում է Հոկտեմբերյան ապստամբության ակտիվ մասնակիցներից մեկը:**

### ԶՐՈՒՅՑ ՅԵՐՐՈՐԴ

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

*Այս թեմայում, վորի նպատակն է ցույց տալ՝ թե ինչպես է առաջացել ու ձևավորվել կոմյերիտմիությունն իբրև կազմակերպություն, պետք է պարզաբանվեն հետևյալ հարցերը.—*

*1. Յերիտասարդական շարժման վիճակն ու զարգացումը մինչև 1918 թվի բանվորական ու գյուղացիական յերիտասարդության առաջին համագումարը:*

*2. Կոմյերիտմիության առաջին համագումարի աշխատանքը և շարժման պատմության մեջ նրա գրաված տեղը:*

*3. Տեղական կազմակերպությունների աշխատանքն առաջին համագումարից հետո, միասնական միության ձևավորման և ստեղծման պրոցեսը:*

*4. Խորհրդային յերկրի բանվոր և գյուղացի յերիտասարդության քաղաքական տրամադրությունների վիճակը կոմյերիտմիության առաջին համագումարից առաջ և հետո:*



### ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Յերիտասարդական շարժման վիճակն ու զարգացումը ՌԿՅԵՄ-ի առաջին համագումարից առաջ յեղած շրջանում (29—30/X—1918 թ.):**

*Այստեղ անհրաժեշտ է մատնանշել հետևյալը.—բանվոր յերիտասարդության միությունների ընդարձակումը և գյուղացի յերիտասարդության միությունների ծագումը Հոկտեմբերից հետո քաղաքում և գյուղում, պրոլետարիատի դիկտատուրայի կառուցման նոր աշխատանքը, գերմանական հարձակման հետ կապված դժվարությունները և այլն. յերիտասարդական գոյություն ունեցող կազմակերպությունների միանալու ձգտումը (նահանգային համագումարներ և կոնֆերենցիաներ Մոսկվայում, Վլադիմիրում, Ն.-Նովգորոդում և այլ քաղաքներում, հյուսիս-արևմուտքի, Ուրալի և այլն յերիտասարդական միությունների մարզային համագումարներ). բանվոր և գյուղացի յերիտասարդական միության առաջին համագումարը հրավիրելու հասունացող պահանջը, Պիտերի և Մոսկվայի միությունների կողմից 1-ին համագումարը հրավիրող բյուրոյի կազմակերպումը:*

**2. Կոմյերիտմիության առաջին համագումարի աշխատանքը յեվ շարժման պատմության մեջ նրա գրաված տեղը.**—*Ծանոթացնել համագումարում քննության առնված հարցերին, մանավանդ՝ տեղերի զեկուցումներին, միության նպատակների և խնդիրների շուրջը ծագած վիճաբանություններին և այլն (ծրագրի, անվան, կուսակցության հետ ունենալիք փոխհարաբերությունների, շարժման միջազգայնականության խնդիրները): Այդ վերլուծման հիման վրա վորոշել բանվոր և գյուղացի յերիտասարդության միությունների առաջին համագումարի տեղն ու նշանակությունը ԽՍՀՄ-ի պրոլետարական յերիտասարդական շարժման պատմության մեջ:*

**3. Տեղական կազմակերպությունների աշխատանքն առաջին համագումարից հետո, միասնական միության ձեվավորվելու յեվ ստեղծվելու պրոցեսը.**—*Ծանոթացնել կոմյերիտմիության առաջին համագումարում ընդունված սկզբունքների համաձայն՝ տեղական կազմակերպությունների վերակառուցման պրոցեսին. միասնական միություն ստեղծելու պրոցեսը (կոմյերիտմիության միացումը սովորող կոմունիստների միության հետ), գավառական և նահանգական միությունների առաջացումը և կազմակերպչական սխեմայի ընդհանուր ձևավորումը (վերջինս պետք է ցույց տրվի կենդանի և տեսանելի ձևով):*

4. Խորհրդային յերկրի բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության քաղաքական տրամադրությունների ընդհանուր դրությունն ու վիճակը կոմյերիտմիության առաջին համագումարից առաջ յեվ հետո.—*Բրեստի հաշտությունից հետո խաղաղ դրության անցնող խորհրդային յերկրի բանվորների և գյուղացիների ընդհանուր դրության ֆոնի վրա ցույց տալ աճող սերնդի մեջ յեղած դասակարգային խավերի և խմբավորումների վիճակը: Պարզել ունկնդիրներին աճող սերնդի շերտավորման պրոցեսը յերկու բանակի ուղղությամբ (խորհրդային իշխանության օգտին և նրան հակառակ): Պարզաբանել յերիտասարդության զանազան խմբակների կարիքներն ու պահանջները տվյալ ժամանակամիջոցում:*

ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ինչո՞վ էր արտահայտվում Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությունը յերիտասարդության գոյություն ունեցած կազմակերպությունների վրա:**

**2. Մեկ միություն կազմելու ցանկության պատճառները:**

**3. Ի՞նչպես անդրադարձավ Բրեստի խաղաղության դաշինքը կոմյերիտական կազմակերպությունների վրա:**

**4. Յե՞րբ է տեղի ունեցել յեվ ի՞նչ է քննության առել I համագումարը:**

**5. Ի՞նչ դրության մեջ էին յերիտասարդության միությունները I համագումարից առաջ:**

**6. Ի՞նչ տվեց շարժմանը I համագումարը:**

ԶՐՈՒՅՑ ՉՈՐՐՈՐԴ

## *ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ*

*Այս թեմայում անհրաժեշտ է խմբակի անդամներին ծանոթացնել մեր հեղափոխության հերոսական շրջանի կոմյերիտական կազմակերպությունների դրությանը, պայքարին և աշխատանքին: Նկատի ունենալով, որ կոմյերիտականների մասսաները քիչ գաղափար ունեն այդ շրջանի մասին, պետք է բոլոր միջոցները ձեռք առնել հասկացնելու և մեկնաբանելու այդ շրջանի ոգին: Այդ թեմայում հետևյալ կոնկրետ խնդիրների վրա պետք կենտրոնացնել ուշադրությունը.—*

*1. Կոմյերիտմիությունն ու յերիտասարդությունը քաղաքացիական պատերազմի տարիներին.*



*2. Հրացանը ձեռքին պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպանության համար (կոմյերիտմիությունն արտաքին և ներքին ճակատներում).*

*3. Կոմյերիտմիության պայքարը հացի համար գյուղում.*

*4. Կոմյերիտմիությունը պետական աշխատանքի մեջ.*

*5. Ներմիութենական աշխատանքի վիճակը քաղաքացիական պատերազմի տարիներին.*

*6. ՀամԼԿՅԵՄ-ի II համագումարի նշանակությունն ու նրա գրաված տեղը միության պատմության մեջ:*

ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Կոմյերիտմիությունն ու յերիտասարդությունը քաղաքացիական պատերազմի տարիներին.**—*Ցույց տալով մեր հեղափոխության հերոսական շրջանում դասակարգերի դասավորությունը, անցնել այդ շրջանի յերիտասարդության դրության մանրամասն և մանրազնին պարզաբանմանը: Ցույց տալ՝ թե կոմյերիտմիությունն ինչ կենտրոնական խնդրի շուրջ («Բոլորը և ամեն ինչ ի պաշտպանություն Խորհրդային իշխանության») էր միացնում բանվոր և գյուղացի յերիտասարդությանը և մասսաներում կատարվող աշխատանքի նրա ձևերն ու մեթոդները (լայն ագիտացիա, խանդավառության բարձրացում): Բացատրել՝ թե ովքեր եյին կոմյերիտմիության թշնամիներն այդ շրջանում և բացատրել աճող սերնդի վրա նրանց ունեցած լուրջ ազդեցության բացակայության պատճառները:*

**2. Հրացանը ձեռքին պրոլետարիատի դիկտատուրայի պաշտպանության համար.**—*Վերլուծել բոլոր ճակատներում, որոնց թվում նաև ներքին ճակատում (ճակատի համար կատարվող զորահավաքների հանրագումարները, ընդհատակյա աշխատանք պարտիզանական շարժման մեջ յեղած և բանդիտիզմի դեմ կռվելու աշխատանք) խորհրդային յերկրի պաշտպանության համար կոմյերիտմիության ունեցած գործունեության բնորոշ թվերն ու փաստերը: Կենդանի և գրավիչ ձևով ծանոթացնել ունկնդիրներին կոմյերիտական կազմակերպությունների դրությանը և ճակատի համար զորահավաք կատարելու փորձին (որն առանձնապես կարևոր է) և այլն:*

**3. Կոմյերիտմիության պայքարը հացի համար գյուղում.**—*Ծանոթացնել գյուղի դրությանը Խորհրդային իշխանության գոյության առաջին տարիներում, ցույց տալ գյուղի կուլակացված լինելու եյությունը, մասնատման սիստեմը և կոմյերիտական*





50638-65
724
Публичная Библиотека

*կազմակերպությունների դերը հացի համար պայքար մղելու գործում։ Բացատրել, թե ինչու՝ չնայած այդպիսի դժվարին ու ծանր պայմաններին, կոմյերիտական կազմակերպությունն այդ յերեք տարվա ընթացքում աճեց ու մեծացավ։ Քննություն անել և ցույց տալ, թե ինչպես էր քաղաքն այդ շրջանում ղեկավարում գյուղը։*

**4. Կոմյերիտմիությունը պետական աշխատանքի մեջ.**—*Այստեղ անհրաժեշտ է պարզաբանել բանվոր յերիտասարդության աշխատանքի և կրթության վերաբերյալ խորհրդային առաջին օրենքները, ցույց տալ այդ օրենքները կյանքում կիրառելու մեջ կոմյերիտմիության ակտիվությունը։ Մյուս կողմից անհրաժեշտ է ունկնդիրներին ծանոթացնել խորհրդային յերկրի պետական ապարատի կառուցման և ամրապնդման մեջ կոմյերիտական կազմակերպությունների ունեցած դերի հետ։*

**5. Ներմիութենական աշխատանքի վիճակը քաղաքացիական պատերազմի օրերին.**—*Ցույց տալ՝ վոր չնայած ամբողջ ուշադրությունը բևեռված էր ճակատներում տեղի ունեցող կռվին, ընդարձակվում ու զարգանում էր ներմիութենական աշխատանքը։ Քննել այդ աշխատանքի ձևերն ու մեթոդները։ (Բանվոր և գյուղացի յերիտասարդության ցուցաբերած չափազանց մեծ ակտիվությունը՝ կազմակերպության աշխատանքի մեջ՝ բացատրել տվյալ ժամանակաշրջանի առանձնահատկություններով)։*

**6. ՀամԼԿՅԵՄ-ի II համագումարի նշանակությունը ու նրա գրաված տեղը միության պատմության մեջ.**—*Յերկրի ընդհանուր դրության և տեղական կոմյերիտական կազմակերպությունների վիճակի ֆոնի վրա քննություն անել ՀամԼԿՅԵՄ-ի յերկրորդ համագումարի կատարած աշխատանքը։ Հատուկ ուշադրություն դարձնել յերիտասարդական շարժման էության և աշխատանքի այն պրոբլեմների վրա, վորոնք դրված են յերկրորդ համագումարի կողմից (յերիտասարդական աշխատանքի վերակազմակերպման պրոբլեմը, կուսակցության հետ ունենալիք փոխհարաբերության պրոբլեմը և այլն)։ Յերկրորդ համագումարի աշխատանքի հիման վրա գնահատական տալ և վորոշել նրա տեղն ու նշանակությունը ԽՍՀՄ-ի պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացման մեջ։*

### ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ինչո՞վ էր արտահայտվում քաղաքացիական պատերազմի ազդեցությունը կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի վրա։**



**2. Ի՞նչ էր տեղի ունենում բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության հետ քաղաքացիական պատերազմի շրջանում։**

**3. Վո՞րոնք են կոմյերիտմիության աշխատանքի արդյունքները՝ խորհրդային յերկիրը կապիտալիստական յերկրներից պաշտպանելու գործում։**

**4. Ի՞նչ էր տեղի ունենում գյուղում քաղաքացիական պատերազմի տարիներում յեվ ինչ աշխատանք եյին կատարում կոմյերիտմիության գյուղական բջիջները։**

**5. Ի՞նչ աշխատանք եյին կատարում կոմյերիտական կազմակերպությունները այդ շրջանում, բացի քաղաքացիական պատերազմին մասնակցելուց։**

**6. Ի՞նչ պայմաններում տեղի ունեցավ յեվ ի՞նչ վորոշեց կոմյերիտմիության II համագումարը։**

## ԶՐՈՒՅՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## *ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ*

*Այս պարապմունքը, վորի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել անցողիկ ժամանակամիջի առաջին շրջանին, պետք է պատրաստել հատուկ խնամքով։ Պետք է ցույց տալ այն բոլոր դժվարությունները, վորոնց հանդիպեց կոմյերիտական շարժումն իր զարգացման այդ շրջանում։ Այդպիսի խնդիրների թվին են պատկանում ստորև բերվածները, վորոնց պետք է արժանացնել հատուկ ուշադրության. դրանք են՝*

*1 Յերկրի և աճող սերնդի ընդհանուր վիճակը քաղաքացիական պատերազմը վերջանալիս.*

*2 Աշխատանքի նոր տեսակի ճանապարհների վորոնումներ և շեղումներ ճիշտ գծից.*

*3. Կոմյերիտմիության վիճակը ՀամԼԿՅԵՄ-ի յերրորդ համագումարի ժամանակ.*

*4. ՀամԼԿՅԵՄ-ի III համագումարի ունեցած տեղն ու նշանակությունը (Լենինի ճառը).*

*5. Հետագայի անկումը—միության ճգնաժամը։*

### ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Յերկրի յեվ աճող սերնդի ընդհանուր վիճակը քաղաքացիական պատերազմը վերջանալիս.**—*Ծանոթանալով Խորհրդային Հանրապետության պատերազմից խաղաղության անցնելու ժամանակ հարուցված խոշորագույն դժվարություններին, ուշադրու-*

*թյունը կենտրոնացնել այդ շրջանի առաջին ամիսների կոմյերիտմիության շարժման աճման պատճառները պարզաբանելու վրա։ Քննության առնել այդ շրջանի կոմյերիտական կազմակերպությունների դրությունը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում։*

**2. Աշխատանքի նոր տեսակի ուղիների վորոնումներ յեվ շեղումներ նրա գծից.**—*Մանրամասն և մանրազնին կերպով բացատրել, թե ինչպես եր տեղի ունենում նոր ուղիներ վորոնելու պրոցեսը կոմյերիտական կազմակերպության աշխատանքում։ Ցույց տալ՝ թե ինչպես ռազմական կոմունիզմի շրջանում առաջ յեկած աշխատանքի ձևերն ու մեթոդները շարունակում են գործել նոր շրջանում և թե ինչպես այդ հիման վրա սկսում է անհամապատասխանություն առաջ գալ աճող սերնդի պահանջների ու կարիքների և կոմյերիտական աշխատանքի բովանդակության մեջ։ Ցույց տալ, վոր այդ շրջանում հատկապես անխուսափելի եյին կոմյերիտմիության մեջ տեղի ունեցող կատաղի դիսկուսիաները։ Պարզել «դունայականության»* («дунаевщина») *եյությունը։*

**3. Կոմյերիտմիության տեղական կազմակերպությունների վիճակը ՀամԼԿՅԵՄ-ի յերրորդ համագումարի ժամանակ.**—*Վերլուծման յենթարկելով տեղական կոմյերիտական կազմակերպությունների վիճակը, մատնանշել կոմյերիտմիության ղեկավար կադրերի մեջ յեղած հիվանդագին յերևույթները, կուսակցական ղեկավարության անբավարար լինելը և միության մեջ յեղած պրոլետարական միջուկի թուլությունը։ Տալ ՀամԼԿՅԵՄ-ի յերրորդ համագումարի ժամանակ կոմյերիտական կազմակերպությունների գործունեյության հանրագումարը։*

**4. ՀամԼԿՅԵՄ-ի յերրորդ համագումարի ունեցած տեղն ու նշանակությունը.**—*Պարզել՝ թե ինչու յերրորդ համագումարը չկարողացավ որակարգում՝ խորհրդային յերկրի առաջ կանգնած հարցերին տալ սպառիչ պատասխաններ (համագումարը տեղի յեր ունենում նոր տնտեսական քաղաքականության անցնելուց առաջ, ռազմական կոմունիզմի շրջանում առաջացած իդեոլոգիայի (գաղափարախոսության) ազդեցությունը և այլն)։ Բացատրել՝ թե ինչու Լենինի՝* III *համագումարում արտասանած ճառն այդ մոմենտին նույնիսկ միության համար այնքան էլ հասկանալի չեղավ. (արմատը կոմյերիտական ակտիվի մեջ ռազմական կոմունիզմի իդեոլոգիայի մնացորդների մեջն է)։ Տալ գրված և յերրորդ համագումարի կողմից լուծումն ստացած խնդիրների գործնական գնահատականը և դրանով վորոշել համագումարի՝ ՀամԼԿՅԵՄ-ի պատմության մեջ գրաված տեղը։*



**5. Հետագայի անկումը—միության ճգնաժամը.**—*Ծանոթանալ կոմյերիտական շարժման զարգացման ընդհանուր ընթացքին յերրորդ համագումարից հետո։ Պարզաբանել՝ թե ինչու նոր տնտեսական քաղաքականություն հայտարարվելով, դրությունը միության մեջ էլ ավելի վատացավ։ Վերլուծման յենթարկել՝ թե ինչն եր նեպի սկզբնական շրջանում կոմյերիտմիության ապրած ճգնաժամի եյությունը։*

ՋՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ի՞նչ փոփոխություն առաջացավ կոմյերիտական կազմակերպությունների դրության մեջ պատերազմի վերջանալով։**

**2. Գյուղի դրությունը տնտեսական նոր քաղաքականության նախօրյակին յեվ ինչո՞ւմն եր կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունների աշխատանքը։**

**3. Կոմյերիտմիության մեջ այդ շրջանում տեղի ունեցող դիսկուսիաների եյությունը։**

**4. Վորո՞նք են կոմյերիտմիության յերրորդ համագումարի վորոշումները յեվ համապատասխանո՞ւմ եյին արդյոք այդ վորոշումները կյանքի պահանջներին։**

**5. Միության աշխատանքի անկման պատճառները յեվ վո՞րն եր այդ անկումը։**

ՋՐՈՒՅՑ ՎԵՑԵՐՈՐԴ

## *ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

*Այս զրույցի մեջ անհրաժեշտ է ցույց տալ ԽՍՀՄ-ի յերիտասարդական շարժման մեջ տեղի ունեցող անցողիկ ժամանակաշրջանի յերկրորդ շրջանը։ Տվյալ թեմայի կոնկրետ խնդիրներն են՝*

*1. Նոր տնտեսական քաղաքականությունն ու նրա ունեցած ազդեցությունը յերիտասարդության ու կոմյերիտմիության վրա.*

*2. Կոմյերիտմիությունը չորրորդ համագումարի ժամանակ.*

*3. Կոմյերիտմիության չորրորդ համագումարի՝ պատմության մեջ ունեցած տեղն ու նշանակությունը։*

ՋՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Նոր տնտեսական քաղաքականությունը յեվ նրա ունեցած ազդեցությունը յերիտասարդության ու կոմյերիտմիության վրա.**—*Խիստ մանրամասն կերպով և ուշիուշով քննության առնել նոր տնտեսական քաղաքականության՝ յերկրի աճող սերնդի*

պանագան խավերի վրա ունեցած ազդեցությունը։ Հատուկ ուշադրությամբ քննության առնել նեպի՝ բանվոր և գյուղացի յերիտասարդության վրա ունեցած ազդեցությունը (հաստիքների (շտատների) կրճատումը արտադրության մեջ, սեփականատիրական շահերի աճումը գյուղում)։ Ցույց տալ՝ թե ինչպես նեպի առաջին շրջանում աճող սերունդը շփոթվել և կորցրել եր իր հեռանկարը («ինչի՞ համար եյինք կռվում»)։ Ցույց տալ՝ թե ինչ բացասական ազդեցություն եր ունենում նեպը կոմյերիտական կազմակերպության առանձին շրջանակների վրա։ Ցույց տալ՝ թե ինչումն եր կուսակցության և կոմյերիտական շարժման՝ նոր տնտեսական քաղաքականությանը հարմարվելու տարբերությունը։

**2. Կոմյերիտմիությունը չորրորդ համագումարի ժամանակ.**—*Թվական նյութի վերլուծման հիման վրա ցույց տալ՝ թե կոմյերիտմիությունն ինչպիսի դասերով համագումար յեկավ։ Հատուկ մանրամասնությամբ պետք է մատնանշվի խորհրդային յերկրի պրոլետարական կենտրոնների և ծայրամասերի աշխատանքի թուլությունը։ Ցույց տալ՝ թե նոր տնտեսական քաղաքականությունն ինչ պրոբլեմներ է դրել միության առաջ։*

**3. Կոմյերիտմիության չորրորդ համագումարի՝ պատմության մեջ ունեցած տեղն ու նշանակությունը** — *Մանրամասնությամբ ծանոթանալ կոմյերիտմիության չորրորդ համագումարում քննված հարցերի հետ, այդ հարցերը քննել՝ կոմյերիտմիության խնդիրները նոր տնտեսական քաղաքականության պայմաններին հարմարեցնելու տեսակետից։ Համագումարի մատնանշած հիմնական լոզունգները (պայքար բանվոր յերիտասարդության համար), և չորրորդ համագումարի՝ ՀամԼԿՅԵՄ-ի պատմության մեջ գրաված տեղը։*

ՁՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ինչո՞վ եր արտահայտվում նեպի ազդեցությունը բանվոր ու գյուղացի յերիտասարդության յեվ կոմյերիտմիության վրա:**

**2. Ինչո՞ւմն են կոմյերիտական կազմակերպությունների վիճակի առանձնահատկությունները նոր տնտեսական քաղաքականության առաջին տարում, թե գյուղում յեվ թե քաղաքում:**

**3. Միության վիճակի դժվարությունները յեվ թե ինչ յելք մատնանշեց կոմյերիտմիության IV համագումարը:**



ՁՐՈՒՅՑ ՅՈԹԵՐՈՐԴ

## ՊԱՅՔԱՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*Այս զրույցում անհրաժեշտ է ցույց տալ այն ամենը, ինչի վոր ձեռնարկել է կոմյերիտմիությունը նոր տնտեսական քաղաքականության առաջին տարիներում մեր յերկրի աճող կադրերի համար մղած կռվում։ Անհրաժեշտ է ցույց տալ այդ շրջանում կոմյերիտական կազմակերպության ցույց տված աշխատանքի կատաղի տեմպը։ Այդ թեմայի մշակման համար հիմնական խնդիրներ են հանդիսանում՝*

*1. Կոմյերիտմիության ստրատեգիան և տակտիկան—յերիտասարդության համար մղած պայքարում.*

*2. Բանվոր յերիտասարդության՝ բրոնյան* (бронь) *արտադրության մեջ.*

*3. Ֆաբգործուս.*

*4. Գյուղյերիտ դպրոց.*

*5. Տարիֆ և աշխատավարձ.*

*6. Կուլտուրական աշխատանքը յերիտասարդության մասսաներում.*

*7. Մանկական շարժման ծագումը*

*8. Կոմյերիտմիության V և VI համագումարների՝ միության պատմության մեջ ունեցած տեղն ու նշանակությունը։*

ՁՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Կոմյերիտմիության ստրատեգիան յեվ տակտիկան յերիտասարդության համար մղած պայքարում.**—*Այստեղ անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչպես է կոմյերիտմիության չորրորդ համագումարից հետո առաջ յեկել կուսակցության և միության աճող սերնդի համար և նոր տնտեսական քաղաքականության բացասական կողմերի դեմ տարվող պայքարը։ Աշխատանքում յեղած հարկածային կետերն ու այն ուժերը, վորոնց ուսերի վրա կուսակցությունն ու միությունը հենել են իրենց ծանր աշխատանքը։*

**2. Բանվոր յերիտասարդության բրոնյան** (бронь) **արտադրության մեջ.**—*Բանվոր յերիտասարդության վորոշ տոկոսի տեղավորումը արտադրության մեջ ապահովելու վերաբերյալ կոմյերիտմիության չորրորդ համագումարի վորոշումները գործնական կերպով կյանքում կիրառելը։ Բրոնյայի* (бронь) *դեկրետի հրատարակման գործում կոմյերիտմիության ունեցած դերը։ Այդ շրջանի բանվոր յերիտասարդության աշխատանքի փաստացի վիճակը։*

**3. Ֆաբգործուս.**—Ցույց տալ՝ թե ինչպես դեռևս կոմյերիտմիության յերկրորդ համագումարի՝ բանվոր յերիտասարդության սոցիալիստական կրթության վերաբերյալ կայացրած վորոշումը, վորը լայնորեն չեր իրագործված, չորրորդ համագումարից հետո իր ամբողջ հասակով դրեց ֆաբրիկա-գործարանային աշակերտության պրոբլեմը։ Մեկնաբանել ֆաբգործուսի համար մղվող պայքարի ուղիներն ու ձևերը և հաջորդ շրջանի ֆաբգործուսի դըպրոցների շինարարության կոնկրետ աշխատանքի թվերն ու փաստերը։ Բանվոր յերիտասարդությանը արտադրության մեջ ամրացնելուն ուղղված միջոցների սիստեմում և վորակյալ բանվորների նոր կադրերի պատրաստման գործում ֆաբգործուսի դպրոցի ունեցած տեղը։

**4. Բանվոր յերիտասարդության տարիֆը յեվ աշխատավարձը.**—Ցույց տալ, թե ինչու նեպի սկզբում խստորեն ընկավ հասակավոր և յերիտասարդ բանվորի աշխատավարձի փոխհարաբերությունը, (նատուրալ (մթերքներով) աշխատավարձի փոխարեն դրամական աշխատավարձի անցնելը)։ Կոմյերիտմիության պայքարը բանվորական որվա կրճատման համար, իբրև լրիվ ութժամյա բանվորական որվա համար։ Տարիֆի և աշխատավարձի պրոբլեմը իբրև բանվորական (կրճատված) որը պաշտպանելու պրոբլեմ։ Կռիվ անչափահասների աշխատանքին վերաբերյալ խորհրդային որենսդրությունը խախտելու դեմ և կոմյերիտմիության կողմից տնտեսական աշխատանքի ընդհանուր ուժեղացումը։ Կոմյերիտմիության և պրոֆմարմինների փոխհարաբերությունների պրոբլեմը։

**5. Գյուղացի յերիտասարդության դպրոցը.**—Գյուղի դրությունը նեպի առաջին տարիներին և գյուղին ավելի ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը միության բանվորական կազմակերպությունների դրության վորոշ չափի ամրացումից հետո։ Գյուղացի յերիտասարդության հետ աշխատելու համար կոնկրետ ձևեր վորոնելու անհրաժեշտությունը։ Քննել, թե ինչպես է ձևավորվել գյուղացի յերիտասարդության համար դպրոց ունենալու գաղափարը։ Այդ գաղափարի իրագործման մեջ կոմյերիտմիության ունեցած դերը։

**6. Կուլտուրական աշխատանքը յերիտասարդության մասսաներում.**—Քննել, թե ինչպես արտադրության մեջ բանվոր յերիտասարդության տնտեսական դրության ամրացման հետ միասին և բանվոր յերիտասարդության բարեկեցության աճումով



սկսում է ուժեղանալ և աճել կուլտուր-քաղաքական աշխատանքը թե կոմյերիտմիության և թե բանվոր յերիտասարդության մասսաներում։ Կուլտուրական աշխատանքի ձևերը և մեթոդները։ Այդ շրջանի կոմյերիտական ակումբների պրոբլեմը։ Յերիտասարդության մեջ կուլտուր-դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու համար «կողմնակի» աշխատողներ գրավելու պրոբլեմը։ Գլխքաղլուսվարի հետ ունենալիք փոխհարաբերությունների պրոբլեմը և աշխատավոր մասսաների քաղաքական լուսավորության համար պետական աշխատանքում կոմյերիտմիության ունեցած դերը։

**7. Մանկական շարժման ծագումը.**—Պարզել այն պատճառները, վորոնք կոմյերիտմիությանը դրդել են դնել մանկական շարժման կազմակերպման խնդիրը։ Մանկական շարժման առաջին քայլերը։ Պայքար մանկական շարժումը ղեկավարելու համար։ Մանկական շարժման համար դրված նպատակը։ Մանկական շարժումն ու բոյ-սկաուտականությունը։

**8. Կոմյերիտմիության V յեվ VI համագումարների՝ միության պատմության մեջ ունեցած տեղն ու նշանակությունը.**—Ծանոթանալ կոմյերիտմիության հինգերորդ ու վեցերորդ համագումարի կատարած աշխատանքին։ Բացատրել պատանեկական շարժման ամրացման գործում նրանց ունեցած դերը։

ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ինչպե՞ս է միությունը կոնկրետացրել IV համագումարի տված՝ «Պայքար յերիտասարդության համար» նեպի բացասական կողմերի դեմ լոզունգը։**

**2. Ի՞նչ միտք ուներ բանվոր յերիտասարդությանը արտադրության մեջ ունենալիք բրոնյայի (бронь) դեկրետի հրատարակությունը։**

**3. Ինչո՞ւ միությունն իր ուշադրությունը սևեռեց ֆաբգործուսի շինարարության վրա։**

**4. Միությունն ի՞նչ մասնակցեց խորհրդային իշխանության սահմանած կրճատ բանվորական որվա (4 յեվ 6 ժամ) պահպանության համար։**

**5. Ի՞նչ եր տեղի ունենում այդ ժամանակաշրջանի կոմյերիտմիության գյուղական բջիջներում։**

**6. Ինչո՞ւ յե սկսում կենդանություն առաջ գալ միության քաղաքական-դաստիարակչական աշխատանքում։**

**7. Ինչո՞ւ կոմյերիտմիությունն առաջ մղեց ժողովրդական**

**կրթության գոյություն ունեցող սիստեմի վճռական վերակազմության գաղափարը:**

**8. Ի՞նչումն է կոմյերիտմիության V և VI համագումարների նշանակությունը յեվ որո՞նք են այդ համագումարների գլխավոր որոշումները:**

ԶՐՈՒՅՑ ՈՒԹԵՐՈՐԴ

## ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*Այս զրույցում հարկավոր է ցույց տալ կոմյերիտմիության՝ յերիտասարդության համար մղած պայքարի արդյունքները և կոմյերիտմիության թվական արագ աճման պատճառները: Տվյալ թեմայի մշակման համար իբրև կոնկրետ հարցեր են հանդիսանալու՝*

*1. Բանվոր և գյուղացի յերիտասարդության ընդհանուր վիճակի փոփոխման հիման վրա տեղի ունեցող աճման պատճառների բացատրությունը.*

*2. Կոմյերիտմիության աշխատանքի ձևերն ու մեթոդները այդ շրջանում.*

*3. Միության քաղաքական ակտիվության աճումը և նրա՝ կուսակցական կյանքում և աշխատանքի մեջ ունեցած մասնակցությունը.*

*4. Վորոշ ճեղքվածք յերիտասարդության պահանջների և կոմյերիտմիության կողմից այդ պահանջներին բավարարելու միջև.*

*5. Աճման ճգնաժամն ու աշխատանքի նոր մեթոդների անհրաժեշտությունը.*

*6. XIV կուսհամագումարը կոմյերիտմիության աշխատանքի մասին:*

ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության ընդհանուր վիճակի փոփոխման հիման վրա բացատրել յերիտասարդական շարժման աճման պատճառները.** — *Անհրաժեշտ է այդ բացատրությունն սկսել բանվոր և գյուղացի յերիտասարդության վրա նոր տնտեսական քաղաքականության ունեցած դրական ազդեցություններից: Դրա հիման վրա անցնել կոմյերիտական շարժման մանրամասն վերլուծությանն ու նրա խիստ բուռն աճման պատճառների պարզաբանմանը:*

**2. Կոմյերիտմիության աշխատանքի ձևերն ու մեթոդները այդ շրջանում.** — *Պարզաբանել թե ինչումն էր կոմյերիտմիության՝ բանվոր և գյուղացի յերիտասարդությանը դաստիարակելու աշխատանքը, այն յերիտասարդության, վորը նրա շարքերն էր մտնում: Կոնկրետ կերպով վերլուծել հետևյալ պրոբլեմները՝ քաղկրթության, մասսաներին ակտիվ աշխատանքի մեջ քաշելը, բանվոր և գյուղացի յերիտասարդության առաջ քաշում դեպի ուսումը և այլն: Գնահատական տալ՝ թե միության գործունեության բոլոր ճյուղերում կոմյերիտմիության աշխատանքն ինչ խորությամբ է ընդգրկել բանվոր և գյուղացի մասսաներին:*

**3. Միության քաղաքական ակտիվության աճումը յեվ կուսակցական կյանքում ու աշխատանքում նրա ունեցած մասնակցությունը.** — *Կուսակցության վիճակը տվյալ ժամանակաշրջանում և կոմյերիտմիության վրա նրա ունեցած ազդեցությունը: Կոմյերիտմիության պայքարը կոմունիստական կուսակցության լենինյան միասնականության համար: Այդ հիման վրա կոմյերիտմիության քաղաքական ակտիվության զգալի աճումը: Յերիտասարդության պահանջների և այդ պահանջները կոմյերիտմիության կողմից բավարարելու միջև տեղի ունեցած ճեղքվածքը: Բացատրել՝ թե ինչ պատճառներով կարող էր առաջանալ այդ ճեղքվածքը:*

**4. Աճման ճգնաժամն ու աշխատանքի նոր մեթոդների անհրաժեշտությունը.** — *Վերոհիշյալի հիման վրա մոտենալ աշխատանքի նոր մեթոդներին և միության աշխատանքի ամբողջ սիստեմի աշխուժացմանը: Մասսաների ստեղծագործությունը նոր մեթոդներ առաջացնելու գործում:*

**5. Տասչորսերորդ կուսհամագումարը կոմյերիտմիության աշխատանքի մասին.** — *Վերլուծել տասչորսերորդ համագումարում կոմյերիտմիության աշխատանքի վերաբերյալ ընդունված բանաձևերի իմաստն ու նշանակությունը և ծանոթանալ տասչորսերորդ համագումարում այդ հարցի շուրջը ծագած վիճաբանություններին: Մատնանշել XIV կուսհամագումարի՝ յերիտասարդության վերաբերյալ հանած բանաձևի արմատական և գլխավոր խնդիրները:*

ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ի՞նչումն էր միության՝ թե՛ գյուղում յեվ թե՛ քաղաքում բուռն կերպով աճելու պատճառները:**

**2. Ցույց տվեք՝ թե ինչպես էին յերկրի ընդհանուր պայմանները ազդում կոմյերիտմիության այդ ժամանակաշրջանի աշխատանքի վրա:**

**3. Կոմյերիտմիությունն ինչպիսի՞ պատասխան էր տալիս աճող սերնդի մասսաների պահանջներին։**

**4. Ինչո՞վ էր արտահայտվում կուսոպոզիցիայի՝ կոմյերիտմիության աշխատանքի վրա ունեցած ազդեցությունը։**

**5. Ինչո՞վ էր արտահայտվում կոմյերիտմիության դերը կուսակցության լենինյան միասնականության համար մղվող պայքարում։**

**6. Որո՞նք էին XIV կուսհամագումարի կոմյերիտմիության աշխատանքի խնդրին վերաբերյալ հիմնական որոշումները։**

ԶՐՈՒՅՑ ԻՆՆԵՐՈՐԴ

## ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*Այս զրույցում անհրաժեշտ է ցույց տալ աճող սերնդի զարգացող պահանջներին բավարարելու կոմյերիտմիության աշխատանքի համար նոր ձևեր ու մեթոդներ հայտաբերելու պրոցեսը և ցույց տալ նույնպես այն արմատական հարցերը, վորոնց վրա այդ շրջանում կենտրոնացել էր կոմյերիտմիության աշխատանքը։ Այդ թեմայի մշակման կոնկրետ հարցերն են՝*

*1. Աշխատանքի նոր մեթոդների մշակումը (ՀամԼԿՆԵՄ VII համագումարը).*

*2. Կոմյերիտմիությունը սոցիալիստական արդյունաբերության կառուցման մեջ.*

*3. Կոմյերիտմիությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման ճակատում.*

*4. Կոմյերիտմիությունը բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում.*

*5. Կոմյերիտմիությունը բոլշևիկյան դաստիարակության համար մղվող պայքարում։*

ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Աշխատանքի նոր մեթոդների մշակումը.**—*Քննել այն խնդիրը, թե ինչ կերպ են անդրադարձել XIV կուսհամագումարի կողմից կոմյերիտմիությանը տրված դիրեկտիվները ՀամԼԿՅԵՄ-ի VII համամիութենական համագումարի վորոշումների մեջ։ Անհրաժեշտ է խիստ մանրազնին կերպով թվել և մեկնաբանել աշխատանքի նոր առաջ յեկող մեթոդները և նրանց ստեղծման պրոցեսը։*

**2. Կոմյերիտմիությունը սոցիալիստական արդյունաբերության կառուցման մեջ.**—*Քննել այս հարցը սոցիալիստական շինարարության պրոբլեմի հետ կապված և իբրև ֆաբրիկա-գործարանային բջիջի ուժերի գործադրման կենտրոն։ Բանվոր յերիտասարդության լայն մասսաներին մեր արդյունաբերության սոցիալիստական ռացիոնալացման գործի մեջ քաշելը։ Սոցիալիստական ռացիոնալացման նախաձեռնողներից խմբակներ ստեղծելը։ Ֆաբգործուսն արդյունաբերության զարգացման վերակառուցման շրջանին հարմարեցնելը և կոմյերիտմիության այդ գործում ունեցած դերը։*

**3. Կոմյերիտմիությունը գյուղի սոցիալիստական վերակառուցման ճակատում.**—*Կոմյերիտմիության գյուղի կազմակերպությունների վիճակն ու դրությունը։ Պայքար բերքատվության բարձրացման համար և աշխատանքի գլխավոր ու հիմնական ողակին, գյուղական տնտեսության կոոպերացման և կոլլեկտիվացման գործին մոտենալը։ Գյուղում բատրակային-չքավորական հենարան ստեղծելու պրոբլեմը և միջակ գյուղացիական յերիտասարդության հետ ունեցած դաշինքի ամրացումը։*

**4. Կոմյերիտմիությունը բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ճակատում.**—*Մեր պետապարատի վիճակն ու նրա բացասական կողմերը։ Այդ ապարատի բարեփոխման պրոբլեմը և կոմյերիտմիության ունենալիք դերն այդ գործում։ Խորհրդային բջիջի աշխատանքում կոմյերիտմիության կատարելիք գլխավոր և հիմնական գործը և ամբողջ միությանը խորհրդային ապարատի բարելավման գործի մեջ քաշելը։ Այդ շրջանում խորհրդային շինարարության մեջ կոմյերիտմիության ունեցած մասնակցության հիմնական արդյունքներն ու յեզրակացությունները։*

**5. Կոմյերիտմիությունը բոլշևիկյան դաստիարակության համար մղվող պայքարում.**—*Միության քաղաքական կրթությունը մաքսիմալ չափով բանվոր ու գյուղացի յերիտասարդության պահանջներին ու կարիքներին և սոցիալիստական շինարարության խնդիրներին հարմարեցնելու պրոբլեմը։ Քաղաքական դաստիարակությունն ու նրա թեորիայի և պրակտիկայի միջև յեղած անխզելի կապը։ Կոմյերիտմիությունն ինչպես էր լուծում տվյալ հարցերը և վորո՞նք էին գործնական աշխատանքի հիմնական արդյունքները ՀամԼԿՅԵՄ-ի VIII համագումարի ժամանակ։*

ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ի՞նչպես անդրադարձավ կոմյերիտմիության VII համագումարի վորոշումների մեջ XIV կուսհամագումարի դիրեկտիվը։**

**2. Ինչո՞ւմն է աշխատանքի նոր մեթոդների էությունը:**

**3. Ինչո՞վ է արտահայտվում ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման վերակառուցման շրջանի ազդեցությունը կոմյերիտմիության վրա:**

**4. Ի՞նչումն է ճաբգործուսի՝ արդյունաբերության կադրերին համարվելու էությունը:**

**5. Կոմյերիտմիությունը VII համագումարում ինչպի՞սի միջոցներ նշեց գյուղի կոոպերացումն ու կոլլեկտիվացումն ուժեղացնելու համար:**

**6. Ինչի՞ մեջ է արտահայտվում կոմյերիտական կազմակերպության անդամների բոլշևիկյան դաստիարակության էությունը:**

ԶՐՈՒՅՑ ՏԱՍԵՐՈՐԴ

## *ԴԵՊԻ ՎՃՌԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ*

*Այս զրույցում պետք է որքան կարելի է խորը կերպով քննության առնել ՀամԼԿՅԵՄ-ի VII համագումարից հետո յեղած ժամանակաշրջանում կոմյերիտմիության կատարած աշխատանքը: Անհրաժեշտ է ցույց տալ կոմյերիտմիության աշխատանքում ձևեր և մեթոդներ վորոնելու պրոցեսը և դրանով փորձել կոմյերիտմիության ընթացիկ աշխատանքը կապելու նախընթաց աշխատանքի հետ: Տվյալ թեմայի մշակման համար իբրև կոնկրետ խնդիրներ հանդիսանում են հետևյալ հարցերը՝*

*1. Աշխատանքի նոր մեթոդները.*

*2. «Կոմսոմոլսկայա Պրավդայի» և առհասարակ կոմյերիտական մամուլի ունեցած դերը շարժման մեջ.*

*3. Բանվոր յերիտասարդության աշխատանքի և կրթության խնդիրները.*

*4. Կոմյերիտական շարժումը ՀամԼԿՅԵՄ-ի VIII համագումարի ժամանակ:*

ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Աշխատանքի նոր մեթոդները.**—*Լուսաբանել այն խնդիրը, թե ինչպես են գործնականում կոմյերիտական մասսայի անձնական պահանջները կապում շարժման ընդհանուր խնդիրների հետ: Ինչպես է կատարվել և կատարվում բանվոր և գյուղացի յերիտասարդության մեջ յեղած զանազան խավերին հարմարվելու պրոցեսը արտադրության և տնտեսության մեջ, թե ըստ հասակի և թե ըստ վիճակի: Կամավորության պրոբլեմը միության*



*աշխատանքում: Ակտիվի և մասսաների փոխհարաբերությունների պրոբլեմը: Ինչպես և նոր մեթոդների զարգացման հիման վրա կատարվում նոր կադրեր առաջ քաշելու պրոցեսը և այլն և այլն:*

**2. «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի ունեցած դերը շարժման մեջ.**—*Կոմյերիտմիության գործնական աշխատանքի համար կենտրոնական օրգանի ունեցած նշանակությունը. Թերթն իբրև աշխատանքի փորձի ամենօրյա հաշվառման, մեր գործունեության բոլոր թերությունների գնդակոծման և աշխատանքի նոր մեթոդներ ձևակերպելու կենտրոն: Կոնկրետ օրինակներով և փորձերով ցույց տալ «Կոմսոմոլսկայա Պրավդա»-ի կատարած աշխատանքը և մատնանշել կոմյերիտական մասսաներին թերթի հաստատուն դարձնելու գործին էլ ավելի մասնակից անելու անհրաժեշտությունը:*

**3. Բանվոր յերիտասարդության աշխատանքի յեվ կրթության խնդիրները.**—*Բրոնյայի վերստուգումն ու նրան արդյունաբերության սոցիալիստական ռացիոնալացման կարիքներին և պահանջներին հարմարեցնելը: Տվյալ ձեռնարկության կոնկրետ օրինակներով քննել այն խնդիրը, թե ինչ փոփոխություններ պետք է մտնեն գոյություն ունեցող սիստեմի մեջ և թե մեր արդյունաբերության ծավալված սոցիալիստական շինարարության պայմաններում ինչ նոր բանի առաջ է կանգնելու կոմյերիտմիության տնտեսական և կրթական աշխատանքը (ՀամԼԿՅԵՄ-ի հինգերորդ կոնֆերենցիան և աշխատանքի ու կրթության վերաբերյալ նրա ունեցած վորոշումները):*

**4. Կոմյերիտական շարժումը ՀամԼԿՅԵՄ-ի VIII համագումարի ժամանակ.**—*Տալ կուսակցության XIV համագումարի և կոմյերիտմիության VII համագումարի վորոշումների կատարման հանրագումարը:*

*Կանգ առնել կոմյերիտմիության VIII համագումարում քննության յենթարկված կոնկրետ խնդիրների վրա (պայքարի ուժեղացում իդեոլոգիական ճակատում, աշխատանքի նոր մեթոդների հետագայի ծավալում, կռիվ կոմյերիտմիության մեջ յեղած մնացած հոգիների դեմ, պայքար յերիտասարդական աշխատանքի սոցիալիստական կազմակերպման համար, մասնակցություն գյուղի կապիտալիստական տարրերի վրա վճռական հարձակում կատարելու գործին, կոմյերիտական աշխատանքի խոշորագույն խնդիրները գլուխ բերող կոմյերիտմիության ակտի-*

մի նոր կադրերի ստեղծում և այլն)։ Մանրամասն և մանրազննին կերպով կանգ առնել այն տվյալ բջիջի աշխատանքի վրա, որին կից գոյություն ունի խմբակ, և նրա գործունեյությունն ուժեղացնելու համար գտնել կոնկրետ միջոցներ։

### ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ինչո՞ւմն է այն վճռական հարձակման էյությունը, որն այդ շրջանում կոմսոմոլը մղեց բոլոր ճակատներում։**

**2. Որո՞նք էին գյուղի կոմյերիտմիության՝ դասակարգային պայքարի սրվելու հետ կապված խնդիրները։**

**3. «Կոմսոմոլսկայա Պրավդա» թերթի դերն աշխատանքի նոր մեթոդների աճման գործում։**

**4. Ի՞նչպես էր ամբողջ միության և նրա առանձին մասերի վիճակը ՀամԼԿՅԵՄ-ի VIII համագումարի ժամանակ։**

**5. ՀամԼԿՅԵՄ-ի VIII համագումարի որոշումների մեջ ի՞նչն է գլխավոր և հիմնականը։**

### ԶՐՈՒՅՑ ՏԱՍՄԵԿԵՐՈՐԴ

## *ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ*

*Այս զրույցում շոշափվելու յեն կոմունիստական յերիտասարդական շարժման հիմնական մոմենտներն Անդրկովկասում։ Զրույցի առանցքը պիտի կազմեն հետևյալ հարցերը.—*

*1. Դժվարություններ Անդրկովկասի-կոմունիստական յերիտասարդական շարժման ծագման առաջ.*

*2. Անդրկովկասի կոմյերիտմիության ընդհատակյա-աշխատանքը.*

*3. Կոմյերիտմիությունը քաղաքացիական կռվի ֆրոնտում.*

*4. Կոմյերիտմիությունն Անդրկովկասի բուրժուական ու մանր-բուրժուական ազգային յերիտասարդական կազմակերպությունների դեմ մղած պայքարում։*

*5. Կոմյերիտմիության իրավատնտեսական, քաղկրթական և մասսայական աշխատանքների նվաճումները և հերթական անելիքները։*

**6. Կոմյերիտմիությունը սոց. շինարարության բնագավառում։**

### ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Դժվարություններ Անդրկովկասի կոմունիստական յերիտասարդական շարժման ծագման ճանապարհին.**— *Այստեղ ան-*



*հրաժեշտ է վեր հանել սոցյալ-տնտեսական այն պատճառները, որոնք արգելք են հանդիսացել կոմունիստական յերիտասարդական շարժման առաջ Անդրկովկասում։ Դրանք են ազգային իդեոլոգիաների խոր ազդեցությունը, բանվոր-յերիտասարդության թույլ կորիզը և առհասարակ յերկրի ընդհանուր հետամնացությունը։*

**2. Անդրկովկասի կոմյերիտմիության ընդհատակյա աշխատանքը.**— *Այստեղ պիտի շոշափել միության ընդհատակյա աշխատանքը։ Վերցնել այդ աշխատանքի առանձին բնորոշ մոմենտները, մանրազննին ուսումնասիրել այն, նպատակ ունենալով ունկընդիրներին ցույց տալ ընդհատակյա աշխատանքի ոչ միայն բովանդակությունը, այլև տեխնիկան։*

**3. Կոմյերիտմիությունը քաղաքացիական կռվի ֆրոնտում.**— *Ցույց տալ, որ կոմյերիտմիությունն Անդրկովկասում նույնպես փառավոր դեր է խաղացել Անդրկովկասի բանվորների և գյուղացիների՝ յերկրի բուրժուազիայի ու կալվածատիրության դեմ մղած պայքարում։ Հայաստանի Մայիսյան շարժումների, Վրաստանի գյուղացիական ապստամբությունների, փետրվարյան դաշնակցական ավանտյուրայի ճնշման ու մենշևիկյան 1924թ. ապստամբությունների դեմ մղած կռվում կոմյերիտմիության դերը։*

*Կոմյերիտմիության զոհերը՝ Ղուկաս Ղուկասյան և մյուսները Հայաստանում։*

**4. Կոմյերիտմիությունը Անդրկովկասի բուրժուական ու մանրբուրժուական ազգային յերիտասարդական կազմակերպությունների դեմ մղած պայքարում.**— *Նախ պիտի բնութագրվեն հակառակորդ կազմակերպությունները՝ դաշնակցական յերիտմիություն, «յերիտ օրթոդոքս» մարքսիստների միություն, մենշևիկյան յերիտմիություն Վրաստանում, շվարդենականություն, մուսավաթիստական յերտիմիություն Ադրբեջանում։*

*Մեր հաջողություններն այս պայքարում։ Կոմյերիտմիությունը Անդրկովկասում տրոցկիզմի դեմ։ Վերջում կանգ առնել միության հերթական խնդիրների վրա։ Անդր. ֆեդերացիայի ամրապնդում, պայքար ազգայնական մտայնությունների դեմ։*

**5. Կոմյերիտմիության իրավատնտեսական ու քաղդաստիարակչական աշխատանքների նվաճումները և մեր հերթական անելիքները.** —*Այստեղ կանգ առնել բանվոր յերիտասարդության պրոֆտեխնիկական կրթության իրավատնտեսական աշխատանքների անցյալի նվաճումների վրա (ֆաբգործուսների թիվը,*

նրանցում ընդգրկվածները)։ Նույնը և հրատարակչական ասպարեզում։ Առանձնապես շեշտել մամուլի դերը և նշանակությունը։

**6. Կոմյերիտմիությունը սոցիալիստական շինարարության բնագավառում։** — *Բանվոր-յերիտասարդությունը պետարդյունաբերության մեջ. յերիտասարդությունը գյուղի կոլեկտիվացման գործում։ Միության դերը յերկրի հասարակական կյանքում։ Կուլտուրական շինարարության խնդիրներ։ Միության անելիքը բանակում։*

ԶՐՈՒՅՑ ՏԱՍԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԴԱՍԵՐԸ

*Այս զրույցը հանդիսանում է յեզրափակող զրույց։ Անհրաժեշտ է տալ ԽՍՀՄ-ի կոմյերիտմիության շարժման հիմնական հանրագումարը և ցույց տալ, թե ինչ է սովորեցնում կոմյերիտմիության պատմությունն իր ամբողջ ընթացքում։ Այս յեզրափակման զրույցը մշակելու համար հիմնական հարցեր պետք է հանդիսանան հետևյալ հարցերը՝*

1. *Կոմյերիտմիության հիմնական նվաճումներն իր տասնամյակին.*
2. *Պրոլետարիատի կուսակցությունն ու յերիտասարդական շարժումը.*
3. *Պատանեկական աշխատանքի պրոբլեմի լուծման մեջ կոմյերիտմիության ունեցած դերը.*
4. *Գյուղացիական սերնդի վերապատրաստման մեջ կոմյերիտմիության ունեցած դերը.*
5. *Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար.*
6. *Կոմյերիտմիությունը — ԿԻՄ-ի առաջավոր ջոկատ.*
7. *Կոմյերիտական ակտիվի առաջքաշումն ու դաստիարակությունը.*
8. *Միութենական աշխատանքի թերությունները։*

ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**1. Կոմյերիտմիության հիմնական նվաճումներն իր տասնամյակին.** — *Անհրաժեշտ է (չծանրաբեռնելով ահագին թվերով, այլ առաջ բերելով միմիայն հիմնական թվերը) տալ կոմյերիտմիության տասնամյակի զարգացման հանրագումարը։ Ռայոնի (բջիջի) տեղական տվյալների հիման վրա ստուգել կոմյերիտմիության աշխատանքի արդյունքը և կոնկրետ կերպով քննել, թե ում է դաստիարակել կոմյերիտմիությունը, ինչ է տվել նա սոցիալիստական շինարարությանը, ինչ է արել յերկրի պաշտպանունակության ուժեղացման և ամրացման համար, ինչ արդյունք է ունեցել կոմյերիտմիության գործունեությունը բանվոր և գյուղացի մասսաների համար և այլն և այլն։ Դրա հետ միասին պետք է խմբակում քննության առնվեն մոտակա տարիների համար կոմյերիտմիության ունենալիք աշխատանքի թե հիմնական խնդիրները և թե հեռանկարները։*

**2. Պրոլետարիատի կուսակցությունն ու յերիտասարդական շարժումը.** — *Տալ կոմյերիտմիության, — իբրև կուսակցության պահեստի, — կատարած աշխատանքի հանրագումարը։ Վորոշել՝ թե կոմյերիտմիությունն իր տասնամյա գոյության ընթացքում իր շարքերից վորքան նոր անդամներ է տվել կուսակցությանը։ Ցույց տալ, վոր կոմյերիտմիության զարգացման ամբողջ ժամանակամիջոցում կուսակցության և կոմյերիտմիության միջև յեղած փոխհարաբերությունները թե տեսական և թե գործնական տեսակետից բնորոշված են ճիշտ. այդ ապացուցում է, վոր կոմյերիտմիությունը պրոլետարիատի կազմակերպությունների սիստեմում ձեռք է բերել իր համար պատշաճ տեղ, այն պրոլետարիատի, վորը կռիվ է մղում հասարակության՝ սոցիալիստական վերակառուցման համար։*

**3. Պատանեկական աշխատանքի պրոբլեմի մեջ կոմյերիտմիության ունեցած դերը.** — *Կոմյերիտմիության ամբողջ պատմական զարգացման հիման վրա ցույց տալ, վոր առանց կոմյերիտմիության ակտիվ մասնակցության և առանց բանվոր յերիտասարդության լայն մասսաների ներգրավման, յերիտասարդական աշխատանքի պրոբլեմը մեր յերկրում լուծել չի կարելի։ Կանգ առնել այդ գործում յեղած հիմնական և գլխավոր խնդիրների վրա և պատասխանել այն հարցին, թե ինչ է սովորեցնում կոմյերիտմիության պատմությունը։*

**4. Գյուղացիական սերնդի վերապատրաստման մեջ կոմյերիտմիության ունեցած դերը.** — *Տալով գյուղում կոմյերիտմիության կատարած գործնական աշխատանքի արդյունքների հանրագումարը, անհրաժեշտ է կանգ առնել այն բացառիկ կարևոր դերի վրա, վորը հանձնարարված է կոմյերիտմիությանը սոցիալիստական հիմունքներով գյուղը վերակառուցելու գործի հա-*

մար։ Քաղաքային խմբակում հատուկ խնամքով պետք է առաջադրվեն քաղաքի և մասնավորապես քաղաքի կոմյերիտմիության՝ յերիտասարդ գյուղի վերապատրաստման գործին ցույց տրվելիք ոգնության խնդիրները։

**5. Սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար.**— *Ցույց տալ, թե ինչպես միության պատմության ամբողջ ժամանակամիջոցում կոմյերիտական կազմակերպությունը յերկրի պաշտպանությունն ամրացնելու գործում հանդիսացել է հիմնական ողակներից մեկը (քաղաքացիական պատերազմի շրջանը, բանվորա-գյուղացիական Կարմիր Նավատորմի վրա ունեցած շեֆությունը, մասնակցությունը Ոսոավիաքիմի մեջ, ՀամԼԿՅԵՄ-ի ռազմականացումը և այլն)։ Խմբակի անդամների ուշադրությունը բևեռել կոմյերիտմիության ռազմականացման հերթական պրոբլեմների վրա։*

**6. Կոմյերիտմիությունը ԿԻՄ-ի առաջավոր ջոկատ.**— *Ցույց տալ, վոր իր զարգացման ամբողջ ընթացքում կոմյերիտմիության շարժումը յեղել է միջազգային կոմունիստական շարժման մի մասը։ Տալ ՀամԼԿՅԵՄ-ի միջազգային գործունեյության հանրագումարը և բանվոր ու գյուղացի մասսաների միջազգային դաստիարակության ունեցած արդյունքների հիման վրա ընդգծել միության միջազգային աշխատանքի հերթական անելիքները։*

**7. Կոմյերիտմիության ակտիվը.**— *Ցույց տալ կոմյերիտմիության տասնամյակի ամբողջ ժամանակամիջոցում նրա ակտիվի դերն ու նշանակությունը, սուր կերպով դնել նոր կադրեր առաջ քաշելու և պատրաստելու խնդիրը, այն կադրերի, վորոնք պետք է կատարեն պատմական զարգացման ընթացքում կոմյերիտական կազմակերպության վրա ընկնող խոշորագույն խնդիրները։*

**8. Կոմյերիտմիության աշխատանքի թերությունները.**— *Մանրազնին կերպով ուսումնասիրել մեր կազմակերպության բոլոր բացերը։ Ոգտագործել խմբակի անդամների՝ ՀամԼԿՅԵՄ-ի պատմության մասին ունեցած ծանոթությունը, ցույց տալու համար, թե ինչպես անցյալի այս կամ այն ժամանակում, սուբյեկտիվ պայմանների հետևանքով աշխատանքը հաջող կերպով առաջ չէր գնում։ Մշակել թերությունները վերացնելու ձևերի ու մեթոդների խնդիրը՝ անցյալի դասերի հիման վրա։*

ԶՐՈՒՅՑԻ ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

**1. Ցույց տվեք կոմյերիտմիության զարգացման հիմնական մոմենտները** (շրջանները):



**2. Ինչո՞վ են բնորոշվում կոմյերիտական կազմակերպությունների աշխատանքի ձևերն ու մեթոդները:**

**3. Ինչո՞վ է արտահայտվել կոմյերիտմիության կողմից 10-ամյակի ընթացքում մեր կուսակցության հասած ոգնությունը**

**4. Ինչո՞վ է արտահայտվում աճող սերնդի կոմունիստական դաստիարակման գործում կոմյերիտմիության ունեցած դերը:**

**5. Ի՞նչպիսի դեր ունի կոմյերիտմիությունը յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալում:**

**6. Ի՞նչպիսի դեր ունի կոմյերիտմիությունը սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործում:**

**7. Ինչո՞ւմն են կոմյերիտմիության ընթացիկ աշխատանքի գլխավոր յեվ արմատական խնդիրները:**

**8. Վորո՞նք են կոմյերիտմիության աշխատանքի թերությունները յեվ ինչպե՞ս պետք է կռվել նրանց դեմ:**

---

# ԲԱՐՁՐ ՏԻՊԻ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԽՄԲԱԿ

**Խմբակի նպատակը.**—Խմբակի նպատակն է մշակման յենթարկել կոմունիստական յերիտասարդական շարժման պատմության, թեորիայի և պրակտիկայի հիմնական խնդիրները և դրանով բարձրացնել միության աշխատավորների—խմբակի անդամների վորակը: Այս խմբակի ծրագիրը կազմել ենք կողմնորոշման համար, այսինքն նայած տեղական պայմաններին նա կարող է կրճատվել, իսկ մի շարք կետեր էլ կարող են ընդարձակման յենթարկվել: Խմբակի հիմնական խնդիրն այն է, վոր մարքսիստական-լենինյան մեթոդի տեսանկյունով մշակման յենթարկվեն կոմյերիտական աշխատանքի թե թեորիային և թե պրակտիկային վերաբերող հիմնական և գլխավոր խնդիրները:

**Խմբակի կազմը.**—Խմբակկոմ է կազմակերպվում խոշոր կենտրոններում ՀամԼԿՅԵՄ-ի ռայոնական կոմիտեներին, կոմյերիտական շրջանային, նահանգական, մարզային մարմիններին կից: Այնտեղ, վորտեղ խմբակ է կազմակերպվում, կամավոր սկզբունքներով դեպի խմբակը պետք է քաշվեն տվյալ յերկրամասի կոմյերիտմիության ամենավորակյալ և բավականաչափ պատրաստություն ունեցող աշխատավորները: Խմբակ մտնողների համար նրանում աշխատելու գիտելիքների մինիմում ենք սահմանում հետևյալ չափը. պատմական մատերիալիզմից—Բուխարինի՝ «Պատմական մատերիալիզմի տեսությունը». քաղաքատնտեսությունից—Միխալևսկի՝ «Համառոտ դասընթաց». լենինիզմից—Ստալինի՝ «Լենինիզմի հիմնական խնդիրները». պատմությունից—Մարքս և Էնգելս՝ «Կոմունիստական Մանիֆեստ», Մոնոսով՝ «Հեղափոխական շարժման պատմությունը» և Պոկրովսկի՝ «Ռուսաստանի պատմությունը ամենասեղմ ակնարկով»:

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր այդ մինիմումը խիստ



ցանկալի է խմբակի բոլոր անդամների համար: Սակայն և այնպես, խմբակի անդամների մեջ կարող են ընդունվել և այն ընկերները, վորոնք պարտավորություն հանձն կառնեն խմբակի ծրագիրը մշակման յենթարկելու հետ միասին մշակել նաև վերոհիշյալ գրականությունը *):

**Խմբակի աշխատանքի մեթոդը.**—Խմբակի աշխատանքի համար իբրև մեթոդ հանձնարարելի է սեմինարական մեթոդը: Այդ մեթոդի էությունն այս է. խմբակի յուրաքանչյուր աշակերտ վերոհիշյալ ծրագրից վորևէ թեմա է վերցնում և այդ թեմայից զեկուցում է պատրաստում: Զեկուցումը խմբակում լինում է բանավոր, իսկ զեկուցման թեզիսների մասին զեկուցողը նախօրոք հայտնում է խմբակի անդամներին ի գիտություն: Իսկ խմբակի մյուս մասնակիցները խմբակավարի հանձնարարած գրականության ոգնությամբ պատրաստվում են քննության յենթարկելու դրվելիք հերթական խնդիրը: Խմբակում պետք է մանրազնին քննության առնվեն մշակվելիք թեմայի բոլոր հիմնական խնդիրները: Զեկուցողը յեզրափակիչ խոսք ունի, վորից հետո հանդես է գալիս խմբակի ղեկավարը, պարզելով և ընդհանրացնելով վիճելի խնդիրները:

**Խմբակավարի մասին.**—Խմբակի կազմակերպման աշխատանքի ամենադժվար և գլխավոր խնդիրը ղեկավար ընտրելու խնդիրն է: Ներկայումս մենք դեռևս բավարար պատրաստության տեր ընկերների կադր չունենք, ուստի և պարզ է, վոր այդպիսի ընկերներին պետք է պատրաստել հենց աշխատանքի պրոցեսում: Ղեկավար պետք է ընտրել տեսականապես ամենապատրաստ կոմյերիտական կամ կուսակցական աշխատողի վորն ընդունակ լինի հենց խմբակի աշխատանքի պրոցեսում պատրաստվելու իր յեզրափակիչ խոսքի համար: Միմիայն այդ ուղղությամբ ընթանալով, խմբակներ ստեղծելով, նշված ծրագիրն իրագործելով, միությունը կկարողանա հետագա աշխատանքի համար պատրաստել վորակյալ ղեկավարների կադրեր: Խմբակի աշխատանքի հետ կապված և ղեկավարներին ու խմբակի անդամներին վերաբերյալ խորհրդատվությունն իր վրա է վերցնում Կ. Լիբկնեխտի անվան Ինդուստրիալ-մանկավարժական ինստիտուտին կից գործ-

*) Մեր տեսակետով (իսկ այս տեսակետը պետք է բոլորի կողմից ընդունելի լինի) վերոհիշյալ գրականությունը կոմյերիտական աշխատավորների ղեկավար կադրի համար պետք է դառնա ուսումնասիրության առարկա, վորպես մինիմում:

վող յերիտասարդագիտության կաբինետը (Մոսկվա, 66, Սպարտակովսկայա, 2):

**Խմբակը վորպես միութենական խնդիրների տրիբունա.**— Բացի իր ծրագիրը մշակելուց խմբակը կարող է (նույնիսկ ցանկալի յե) քննության դնել մի շարք պրոբլեմներ, հրավիրելով կոմյերիտական ակտիվիստների ավելի ընդարձակ շրջան: Այդ խնդիրները կարող են ունենալ թե տեսական և թե խիստ գործնական բնույթ:

**Այլ կազմակերպչական խնդիրներ.**— Կազմակերպչական մյուս խնդիրների կարգին է պատկանում յերիտասարդական շարժման համար գրադարան ստեղծելու խնդիրը: Յեթե մոտակայքում (կուսմարմնին, կոմյերիտմիության տանը կից և այլն) կա գրադարան, վորով կարելի յե ոգտվել, կարելի յե այդպիսի գրադարանը լրացնել յերիտասարդական գրականությամբ, յեթե այդպիսին (գրադարան) գոյություն չունի, պետք է ստեղծել նորը: Խմբակի աշխատանքի պրոցեսում անհրաժեշտ է նույնպես ոգտվել ՀամԼԿՅԵՄ-ի տեղական կազմակերպության դիվանից (արխիվ), վորի համար անհրաժեշտ կլինի այդ դիվանը դնել պատշաճ վիճակում: Մենք լրջորեն հանձնարարում ենք խոշոր կենտրոններում ստեղծել յերիտասարդագիտության աշխատանոցներ (կաբինետներ), վորոնք խմբակի անդամների համար կհանդիսանային իբրև նյութերի ընտրության բազա, և իբրև այնպիսի տեղ, վորտեղ կկենտրոնանային խմբակների աշխատանքի արդյունքներն ու փորձը:

Խմբակի աշխատանքի հաշվառման և ժողովների ժամկետներ նշանակելու համար խմբակն իր միջից ընտրում է խմբակի ավագ, վորը ղեկավարի հետ միասին լուծում է խմբակի աշխատանքի կազմակերպման բոլոր խնդիրները:

Բարձր տիպի խմբակի աշխատանքի ուրվագիծը, վորը մենք տալիս ենք նրա ծրագրի զարգացման դեպքում, հանդիսանում է միմիայն իբրև հիմք: Այն ընկերը, վորը վորոշ թեմա յե հանձն առել, գրականություն ընտրելու գործում ինքը պետք է նախաձեռնություն հանդես բերի: Խմբակը հավաքվում է մոտավորապես ամիսը յերկու անգամ: Խմբակի առաջին պարապմունքը կազմակերպչական բնույթ է կրելու: Այդ պարապմունքին ծանոթանում և քննության են յենթարկում խմբակի ծրագիրը, խոսում են աշխատանքի մեթոդի մասին, դեկուցումների թեմաներն են բաժանում և ընտրում են խմբակի ավագ: Հենց խմբակի անդամ-



ների այդ առաջին (կազմակերպչական) նիստումն էլ հաստատվում է խմբակի աշխատանքի համար ղեկավարի կազմած (կոմիտեյի բյուրոյի կամ ագիտպրոպ բաժնի կոլլեգիայի հետ միասին) տարեկան որինակելի ժամացուցակը:

---

## ԲԱՐՁՐ ՏԻՊԻ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ

### I թեմա

### ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴՐԱՎԱԾ ՏԵՂԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՍՏԵՄՈՒՄ (ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

#### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Յերիտասարդական շարժման բնորոշումը:
2. Յերիտասարդական շարժման ծագման պատճառները:
3. Յերիտասարդական շարժման դասակարգային բնույթը:
4. Յերիտասարդական շարժման տեսակները:
5. Յերիտասարդական շարժման նպատակը:

**1. Յերիտասարդական շարժման բնորոշումը.**— «Յերի-«տասարդական շարժման բնորոշումը» գաղափարի տակ հասկացվում է յերիտասարդական շարժման եյությունը պարզաբանելու անհրաժեշտությունը, յերիտասարդության, վորը հասարակական կազմակերպությունների տեսակներից մեկն է: Յենթադրվում է, վոր խմբակի յուրաքանչյուր մասնակից ընդհանրապես յերիտասարդական շարժման աշխատանքի պրակտիկային արդեն ծանոթ է: Թեմայի այդ մասի բաղկացուցիչ տարրը պետք է հանդիսանա այն խնդիրը, թե ինչ է նշանակում յերիտասարդական շարժման թեորիան,—վորպես վորոշ սիստեմի բերված, յերիտասարդական շարժման զարգացման մեջ յեղած յերևույթներն որինաչափության յենթարկող դրույթների մի ամբողջություն: Վոչ մի տեղ չի կարելի վորոնել և չկան վերջնական ձևակերպումներ: Սակայն այդ չի նշանակում, վոր չի կարելի մի սիստեմի բերել մի շարք հիմնական դրույթյուններ, վորոնք արդեն կոմյերիտական հասարակայնության սեփականությունն են կազմում: Այս թեմայում արդեն պետք է ցույց տալ, վոր յերիտասարդական շարժման բնորոշումը հենց տեսական մի խնդիր է, վորից բղխում են ուսումնասիրության և մշակման յենթակա մի շարք պրոբլեմներ:

**2. Յերիտասարդական շարժման ծագման պատճառները.** — Այս մասում անհրաժեշտ է նյութերի մշակման հիման վրա վորոշել՝ թե ինչպես հասարակական զարգացման վորոշ աստիճանում, սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությամբ, յերիտասարդական շարժում (թե՛ պրոլետարական և թե՛ բուրժուական) է առաջանում: Պարզաբանել, թե հասարակության տնտեսական ու քաղաքական կյանքում ինչպիսի կոնկրետ գործոններ (փակտորներ) ազդում են յերիտասարդական կազմակերպությունների վրա: Դա խնդրի մի կողմն է: Խնդրի մյուս կողմը՝ յերիտասարդական շարժման կենսաբանական հիմունքների (աճող օրգանիզմի բույթը) և յերիտասարդական շարժման ծագման վրա ունեցած կենսաբանական կողմի ազդեցության պարզաբանումն է: Կոնկրետ փաստերով և օրինակներով ցույց տալ, վոր յերիտասարդական շարժման հիմքը կազմում են, այնուամենայնիվ, սոցիալ—տնտեսական, և վոչ թե կենսաբանական պատճառները (յերիտասարդական շարժման ծագումն ընդարձակ յեղանակով միմիայն կապիտալիստական հասարակարգում կամ կապիտալիզմին անցնելու սահմանագծում): Պարզաբանել և ցույց տալ, թե ինչ ընդհանուր գիծ և ինչ տարբերություն կա բուրժուական և պրոլետարական յերիտասարդական շարժման առաջ գալու պատճառների մեջ: Մեծահասակների կազմակերպությունների ունեցած ընդհանուր-քաղաքական ազդեցությունը յերիտասարդական կազմակերպությունների ձևավորման վրա:

**3. Յերիտասարդական շարժման դասակարգային բնույթը.** — Ցույց տալ, վոր յերիտասարդություն «ընդհանուր» իմաստով՝ չկա, այլ կա այս կամ այն դասակարգի կամ միջդասակարգային շերտավորման աճող մաս: Ըստ դասակարգային նշանի կապիտալիստական հասարակության մեջ գոյություն ունեցող յերիտասարդության հիմնական խմբավորումները: Պարզաբանել իբրև դասակարգի մաս կազմող յերիտասարդության դրության առանձնահատկությունները (վորոշ չափի անորոշություն և վոչ ամրապնդվածություն հասարակության տնտեսական կառուցվածքում, մեծ հնարավորություն ընդունելու ավյալ դասակարգի համար խորթ ազդեցությունը, պայքար կյանքում տեղ ունենալու համար և այլն): Ցույց տալ, վոր յերիտասարդական շարժումն առաջ է գալիս և զարգանում է իբրև դասակարգային շարժում, վորը ծառայություն է մատուցելու վորոշ դասակարգի շահերին: Հաստատել ապաքաղաքականության («անկուսակցականության») գաղափարի լիակատար անհեթեթությունն ու անհիմնությունը: Ցույց տալ, թե ինչու յերիտասարդական շարժման դասակարգային դեմքը կապիտալիստական հասարակության մեջ գոյություն ունեցող հակասությունների աճման հետ միասին գնալով ավելի և ավելի յե ձևակերպվում:

**4. Յերիտասարդական շարժման տեսակները.** — Նայած՝ թե յերիտասարդական կազմակերպությունները (տնտեսական, քաղաքական կամ կուլտուրական) ինչ բնույթի ծրագրային խնդիրներ են դնում իրենց առաջ, ըստ այնմ էլ նրանք ստանում են այս կամ այն կերպարանքը: Ցույց տալ, որ դասակարգային հասարակության մեջ գոյություն ունեցող հակասությունների աճման հետ միասին վերոհիշյալ բոլոր խնդիրները միանալով մի անբաժանելի ամբողջություն են կազմում, մտնելով մեկ ծրագրի մեջ և դառնալով իբրև մեկ շարժում (պարզել այդ յերևույթների պատճառները): Յեվ ընդհակառակն յերիտասարդական շարժման արշալույսին—յերիտասարդական շարժման գոյություն ունեցող տեսակները վերը հիշված նշանների համաձայն բաժան-բաժան են (մի բան, վորը նույնպես մատերիալիստական բացատրություն է պահանջում):

**5. Յերիտասարդական շարժման նպատակը.** — Այդ հարցի մեջ է յերիտասարդական շարժման և այս կամ այն դասակարգի կազմակերպությունների սիստեմի մեջ նրա գրաված տեղի և նպատակի պրոբլեմը: Պարզել՝ թե ինչպես աստիճանաբար ավելի և ավելի յե պարզվում յերիտասարդական շարժման նպատակը, այն յերիտասարդության, վորն այս կամ այն դասակարգի համար «պահեստ և գործիք» է հանդիսանում: Քննել բուրժուական և պրոլետարական կազմակերպությունների սիստեմները և վորոշել այդ սիստեմներում յերիտասարդական շարժման ունեցած տեղը: Պարզել յերիտասարդական շարժման՝ այս կամ այն դասակարգային սիստեմի յուրաքանչյուր օղակի հետ ունեցած փոխհարաբերությունները: Պարզել յերիտասարդական կազմակերպության՝ յերիտասարդության մասսաների (և նրա առանձին սոցիալիստական խմբավորումների ու շերտավորումների) հետ ունեցած փոխհարաբերությունները:

Գրականություն

1. Сталин.—«Вопросы ленинизма». Раздел «Паргия и рабочий клласс в системе диктатуры пролетариата». եջ 21-45.

2. Леопольд Авербах.—«Вопросы юношеского движения и Ленин» Հրատ.«Молодая гвардия»,М. 1924 г. Առանձնապես եջ՝ 1—47:

3. Лазарь Шацкин.— «Основные вопросы юношеского движения». Հրատ. 2-րդ «Молодая Гвардия». М. 1925 г. Առանձնապես եջ՝ 1—25, 63—69, 77—89, 128—132.

4. Н. И. Бухарин— «Борьба за кадры». Հրատ. «Молодая Гвардия». 1926 г. 1) Проблема кадра в пролетарской революции 3—25, 2) К вопросу о поколениях в партии, 96—133

5. Лазарь Шацкин.—«Первые годы Коммунистического Интернационала Молодежи». Изд. «Новая Москва», 1926 г. Отдел третий «К программе КИМ'а», եջ. 305—332:

6. О. Тарханов.—«Очерки истории КИМ». Выпуск 1, Հրատ. «Молодая Гвардия», 1925 г. եջ. 1—19:

7. А. Шохин.—«Ленинская учеба»-ի կոմյերիտմիության շարժման՝ պրոլետարիատի կազմակերպությունների սիստեմում գրաված տեղը գլուխը: Դասագիրք կոմյերիտական յերկրորդ աստիճանի քաղգրոցների և ինքնազարգացման համար: Հրատարակ. «Молодая Гвардия», Москва, 1927 г. եջ 272—279:

8. Вл. Мирошевский.— «Буржуазные юношеские организации в Германии». Հրատ. «Молодая Гвардия», Москва, 1924 г. եջ 1—106:

9. А. Леонтьев.—«Пролетарское юношеское движение». Հրատ. «Молодой рабочий», Харьков, 1924 г. եջ 41:

## II Թեմա

## ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*1. Ակնարկ Արևմուտքի պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացման մասին, ներառյալ նաև ԿԻՄ-ի պատմությունը:*

*2. Շարժման զարգացման դարաշրջանները և նրանց առանձնահատկությունները:*

*3. Յերիտասարդական շարժման մեջ յեղած «ավանգարդիզմի» պրոբլեմը:*

*4. Արևմուտքի պրոլետարական յերիտասարդական շարժման մեջ յեղած որինաչափությունները:*



### ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Այս թեման, խմբակի բավարար թվով անդամներ ունենալու*
*դեպքում, կարելի յե բաժանել յերեք-չորս անկախ փոքրիկ թե-*
*մաների[1]) այն կարգով, ինչպես ցույց ե տրված ծրագրում:*
**1. Ակնարկ Արեվմուտքի յերիտասարդական պրոլետարական**
**շարժման զարգացման մասին, ներառյալ նաև ԿԻՄ-ի պատ-**
**մությունը** *—Այս մասում անհրաժեշտ ե բաց անել ամբողջ Արև-*
*մուտքի պրոլետարական յերիտասարդական շարժման պատմու-*
*թյունը: Վորոշել յերիտասարդական շարժման՝ սոցիալ-տնտեսա-*
*կան պայմանների հետ ունեցած կոնկրետ պատճառական կապն*
*ու նրանցից ունեցած կախումը ընդհանրապես, և մասնավորա-*
*պես այն յերկրում, վորտեղ այդ շարժումը զարգանում ե: Այդ*
*պրոբլեմի ուսումնասիրության հետևանքով պետք ե ստացվի յե-*
*րիտասարդական պրոլետարական շարժման զարգացման սխեման,*
*ներառյալ նաև ԿԻՄ-ի պատմությունը:*
**2. Շարժման զարգացման դարաշրջանները յեվ նրանց ա-**
**ռանձնահատկությունները**.*—Այս մասում անհրաժեշտ ե անցնել*
*յուրաքանչյուր դարաշրջանի պրոլետարական յերիտասարդական*
*շարժման զարգացման առանձնահատկությունների վերլուծու-*
*թյանը: Պարզել, թե ինչպե՞ս և ինչո՞ւ, սոցիալ-տնտեսական պայ-*
*մանների շնորհիվ բանվորական շարժման դրությունը, յերիտա-*
*սարդության մեջ տեղի ունեցող սոցիալիստական կուսակցություն-*
*ների աշխատանքը և ընդհանուր միջազգային դրությունն այս*
*կամ այն չափով ազդում եյին պրոլետարական յերիտասարդական*
*կազմակերպությունների աշխատանքի վրա:*
**3. Ավանգարդիզմը յերիտասարդական շարժման մեջ.***—Այս*
*մասում ուշադրությունն առանձնապես պետք ե բևեռել հասա-*
*կավորների և յերիտասարդների միջև տեղի ունեցող բախման*
*(կոնֆլիկտ) վրա, մի բախում, վոր տեղի ուներ Արևմուտքի հա-*
*սարակական շարժման մեջ: Ցելնելով դրանից, ցույց տալ, թե*
*վորչափ յերիտասարդական շարժման «ավանգարդիզմի» տեսու-*
*թյունն որինաչափ և անխուսափելի յե յեղել վորոշ ժամանակա-*
*միջոցում: (Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի աջ թեքվելու*
*կոնկրետ որինակով, պրոլետարիատի տեսակետով քննության*
*առնել յերիտասարդական շարժման՝ սոցիալ-դեմոկրատիայի դեմ*
*ունեցած պայքարը): Ցույց տալ, վոր այլ պայմաններում ավան-*
*գարդիզմի տեսությունը սխալ տեսություն ե:*

*[1]) Կարելի յե բաժանել 3 անկախ փոքրիկ թեմաների, այն պայմանով, վոր ստորև թված 1-ին և 4-րդ փոքրիկ թեմաները միացվեն:*

**4. Արեվմուտքի պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացման որինաչափությունները.**—*Այս մասում անհրաժեշտ է քննել Արևմուտքի պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացման որինաչափությունները։ (Որինաչափության եյությունը.—նպատակադրումը փոխելը, աշխատանքի ձևերն ու մեթոդները, կուսակցության և յերիտասարդության մասսաների հետ ունենալիք փոխհարաբերությունները և այլն)։*

*Գրականություն*

*1.* Георгий Чичерин. - «Очерки из истории юношеского Интернационала», с предисловием О. Скара, *էջ 99։*

*Կան* ГИЗ *ի և* «Молодая Гвардия»*-ի այդ գրքի միքանի հրատարակությունները, սկսած 1920 թվից։*

* *2.* Вилли Мюнценберг.—«Социалистические организации молодежи до и во время войны». Издание Коммунистического Интернационала Молодежи, Петроград, *1922* г., *էջ 275։*

*Կա համառոտ հրատարակությունը 1923 թ.* «Молодой Рабочий», Харьков *էջ 93։*

* *3.* Лазарь Шацкин.—«Первые годы Коммунистического Интернационала Молодежи». *Հրատ.* «Новая Москва», *1926 թ. էջ՝ 333։ Գինը 2 50 ռ. կ.։ Այս գրքույկը հանդիսանում է ԿԻՄ կազմակերպության պատմության համար իբրև հիմնական ձեռնարկ։*

*4.* Хрестоматия —«Поколение войны и революции». *Միջազգային յերիտասարդական պրոլետարական շարժման պատմության համար ընթերցանության գիրք։* Под редакц. Вл. Мирошевского. Изд. *1923* г. «Молодая Гвардня», Москва. *էջ 153։*

*5.* «Молодежь в революции».—Сборник. Издание КИМ'а, Петроград, *1923* г. стр. *654. Յերիտասարդության Կոմինտերնի մեջ մանող առանձին միությունների գործունեության վերաբերյալ փաստական տվյալների խիստ արժեքավոր ժողովածու։ Ժողովածուն ընդգրկում է յեռամյա շրջան (1918—1920 թ. թ.)։*

*6.* «Юная Гвардия». *Արևմուտքի բանվոր յերիտասարդության շարժմանը նվիրված ժողովածու։* Под редакцией В. Мирошевского. Издание ЦК КСМУ. Харьков. Стр. *116. Ժողովածուն ունի յերեք բաժին՝ Արևմուտքի բանվոր յերիտա-*



*սարդության աշխատանքն ու կենցաղը, զանազան յերկրների կոմյերիտականների գործունեությունը, մեր հակառակորդները. Յուրաքանչյուր բաժնում կան հոդվածներ, ակնարկներ, պատմվածքներ, հուշեր, տպավորություններ և այլն։ Ժողովածուն նկարազարդ է։*

* *7.* Левгур. —Юношеское движение на Западе и Во-
стоке. *(հայերեն) Կոնսպեկտ-ձեռնարկ։* Изд. «Молодая Гвардия»,
*1923* г. Москва: *Կարճ, սակայն բավականին լրիվ պատմական
ակնարկ, վորը վերաբերում է այդ շարժմանն սկսած իր սկզբնա-
վորությունից մինչև 1923 թ.։*

*8.* Тарханов.—Очерки истории КИМ'а. Выпуск I. Из-
дание «Молодая Гвардия». *1925* г. Стр. *214. Գինը 90 կ.։ Այդ
աշխատանքի քննադատական ակնարկը տես Խիտարով-ի* «Ком-
